2026, ՀՈՒԼԻՍ Բ, ԹԻՎ 14 (706)

Տիգրան Մեծ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց



Հուլիսի 16-ին

Գերմանիայից ժամանած գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Գերմանիայից ժամանած գիտակրթական ոլորտի ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու եպիսկոպոսաց ժողովի խոսնակ, մամուլի և հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար դոկտոր Մաթթիաս Կոպպի:

Դոկտոր Մաթթիաս Կոպպը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, Նորին Սրբությանը ներկայացրեց հյուրերին՝ տեղեկացնելով, որ ճանաչողական այցի նպատակն է առավել խորությամբ ծանոթանալ Հայոց Եկեղեցուն, հայ ժողովրդի պատմությանը, հոգևոր ու մշակութային ժառանգությանը և քրիստոնեական ավանդույթներին:

Այնուհետև Ամենայն Հայոց Կաթողիկոսը ողջունեց հյուրերի այցը Հայաստան և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ ընդգծելով, որ այսօրինակ այցելությունները նպաստում են ժողովուրդների և եկեղեցիների միջև հարաբերությունների ու եղբայրական կապերի առավել ամրապնդմանը:

Իր խոսքում Հայոց Հայրապետն անդրադարձավ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կարևոր առաքելությանը հայ ժողովրդի կյանքում՝ մասնավորապես ընդգծելով Եկեղեցու դերակատարությունը քրիստոնեական հավատքի զորացման, ազգային ինքնության պահպանության, հոգևոր ու մշակութային ժառանգության կերտման գործում:

Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց նաև հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերներին՝ իր գնահատանքը հայտնելով բարեկամ երկրներին, այդ թվում՝ Գերմանիային, Քույր Եկեղեցիներին և միջազգային կառույցներին՝ դժվարին ժամանակներում հայ ժողովրդին ու Հայ Եկեղեցուն ցուցաբերվող զորակցության համար:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը պատասխանեց հյուրերի հարցերին, որոնք վերաբերում էին Հայոց Եկեղեցու գործունեությանը, միջեկեղեցական հարաբերություններին, Հայաստանի հոգևոր ու հասարակական կյանքին:



Հուլիսի 26-ին

ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի ուխտավորներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց ԱՄՆ Հայոց Արևելյան թեմի Մասաչուսեթս նահանգի Ուստրի Սուրբ Փրկիչ եկեղեցու համայնքի ուխտավորներին՝ առաջնորդությամբ հոգևոր հովիվ Արժանապատիվ Տ. Թադեոս քահանա Բարսեղյանի:

Իր սերն ու օրհնությունը փոխանցելով ուխտավորներին՝ Վեհափառ Հայրապետը կարևորեց աշխարհասփյուռ հայոց թեմերից նման ուխտագնացությունների կազմակերպումը, ինչը հնարավորություն է ընձեռնում հաղորդ դառնալու հայրենական կյանքին, հոգևոր, ազգային ժառանգությանն ու սրբություններին, ինչպես նաև իրենց զորակցությունը բերելու հայ ժողովրդին այս դժվարին օրերին:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ հայրենիքից ստացած տպավորությունները նոր ներշնչանքի աղբյուր կդառնան ուխտավորների համար՝ առավել զորացած վերադառնալու իրենց համայնք և շարունակելու իրենց առաքելությունն ազգային կյանքում:



Հուլիսի 30-ին

Համահոմենըթմենական 13-րդ բանակումի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հուլիսի 30-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Համահոմենըթմենական 13-րդ բանակումի մասնակիցներին: Չորս տարին մեկ կազմակերպվող բանակումին այս տարի մասնակցում են շուրջ 900 սկաուտներ՝ աշխարհի 26 երկրներից:

Նորին Սրբությունը, Հայրապետական իր սերն ու օրհնությունը փոխանցելով ներկաներին, գոհունակություն հայտնեց հայրենիքում աշխարհասփյուռ հայորդիների համախմբման, ինչպես նաև բանակումի շրջանակում կազմակերպվող կրթական, մշակութային ու հոգևոր ծրագրերի առիթով: Վեհափառ Հայրապետը կարևոր նկատեց հայրենաճաճաչության նմանօրինակ ծրագրերը, որոնք կոչված են զորացնելու երիտասարդների ազգային գիտակցությունը և ազգին ու հայրենիքին ծառայելու պատրաստակամությունը:

Հայոց Հայրապետն ընդգծեց, որ գտնվելով հայրենիքում՝ երիտասարդները հաղորդ են դառնում հայրենի իրականությանը, ծանոթանում հայ ժողովրդի պատմությանը, մշակույթին, հոգևոր ժառանգությանն ու նվիրական սրբություններին և առավել խորությամբ ճանաչում իրենց ինքնությունը: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ Հայաստանում անցկացրած օրերը նրանց համար կդառնան անմոռանալի՝ հարստացած նոր հոգևոր ապրումներով, ջերմ տպավորություններով ու բացահայտումներով: Իր խոսքում Վեհափառ Հայրապետն ուրախությամբ անդրադարձավ երիտասարդների հայրենասիրական ոգուն, աստվածսիրությանն ու եկեղեցասիրությանը՝ նշելով, որ հենց այդ արժեքներն են ամուր պահում ազգային կյանքը, միավորում աշխարհասփյուռ հայությանը և զորացնում հայ ժողովրդի հավատն ու հույսը ապագայի հանդեպ:

Անդրադառնալով հայ ժողովրդի և հայրենիքի առջև ծառացած մարտահրավերներին՝ Նորին Սրբությունն ընդգծեց, որ ներկա ժամանակներում առավել, քան երբևէ, անհրաժեշտ են ազգային միասնականությունը, եղբայրասիրությունն ու անսակարկ նվիրումը համազգային շահերին: Հայոց Հայրապետի խոսքով՝ միայն սիրով, միաբանությամբ և համախմբված ջանքերով հնարավոր կլինի հաղթահարել առկա փորձությունները և կերտել խաղաղ, ապահով ու բարօր հայրենիք:

Այնուհետ Նորին Սրբությունը պատգամեց հայորդիներին իրենց հոգիներում մշտավառ պահել ազգային ոգին, անսասան՝ հավատն առ Աստված և աննվազ՝ սերն առ հայրենին ու Սուրբ Եկեղեցին: Հայոց Հայրապետը մաղթեց, որ այդ սիրով առաջնորդվեն իրենց կյանքում, ուսման ու աշխատանքի մեջ և իրենց շնորհներն ու կարողությունները ծառայեցնեն հայ ժողովրդի բարօրությանն ու առաջընթացին և հայրենիքի շենացմանը: ➥ *էջ 2*

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Համահոմենըթմենական 13-րդ բանակումի մասնակիցներին

↩ էջ 1

Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը հայտնեց ՀՄԸՄ կենտրոնական վարչության անդամներին, բանակումի կազմակերպիչներին և ազգային կառույցների ներկայացուցիչներին, որոնք իրենց նվիրյալ ծառայությունն են բերում երիտասարդ սերնդի կրթության, ազգային ու հոգևոր դաստիարակության և հայեցի նկարագրի կերտման նվիրական գործին:



Հուլիսի 31-ին

ՀԲԸՄ «Բացահայտիր Հայաստանը» ծրագրի մասնակիցներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ) «Բացահայտիր Հայաստանը» ծրագրին մասնակից սփյուռքահայ երիտասարդներին:

Իր օրհնությունն ու հայրական պատգամը բերելով ներկաներին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարձրորեն գնահատեց Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության կողմից շարունակաբար իրականացվող նմանօրինակ ծրագրերը, որոնք հնարավորություն են ընձեռում սփյուռքի տարբեր համայնքներից ժամանած հայորդիներին հաղորդ դառնալու հայրենի իրականությանը, ամրապնդելու հայրենիքի հետ կապը և իրենց գիտելիքներն ու կարողություններն առավել չափով ի սպաս դնելու հայ ժողովրդի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը և լուսավոր ապագայի կերտմանը:

Նորին Սրբությունը նաև հորդորեց ներկաներին առավել խորությամբ ճանաչել Հայոց Եկեղեցին և նախնյաց՝ դարերի ընթացքում կերտած հարուստ հոգևոր ու մշակութային ժառանգությունը, որը բացառիկ դեր է ունեցել հայ ժողովրդի ազգային ինքնության ձևավորման և պահպանման գործում:

Վերջում Վեհափառ Հայրապետը պատգամեց երիտասարդներին ամուր պահել կապը հայրենիքի և Մայր Եկեղեցու հետ, օգտակար մասնակցություն բերել ազգային- հոգևոր կյանքին և հայրենիքի շենացմանը:

Լրատվական նյութերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի

Քրիստոսի լռությունը Պիղատոսի առջև. ճշմարտության և իշխանության բախումը

Սկիզբը՝ թիվ 13

Լռության աստվածաբանությունը

Լռությունը՝ որպես հասունացման առիթ: Սաղմոսերգուն գոչում է. «Մինչև ե՞րբ, ո՛վ Տեր, ինձ բոլորովին պիտի մոռանաս» (Սաղմ. ԺԲ 2), բայց ավարտում է վստահությամբ: Աստծու լռությունը հաճախ Նրա ներկայության ամենախոր ձևն է, որը մեզ հրավիրում է հավատքի հասունության՝ սովորեցնելով վստահել Աստծուն նույնիսկ այն ժամանակ, երբ Նրա ձայնը չի լսվում: Այս հոգևոր հասունացումը հաճախ անցնում է «հոգու մութ գիշերվա» միջով, որտեղ մարդը ստիպված է լինում բաց թողնելու Աստծու մասին իր մարդկային պատկերացումները: Երբ մենք ակնկալում ենք անհապաղ պատասխաններ, երկրային հրաշքներ կամ արդարության ակնթարթային վերականգնում, Աստծու լռությունը մեզ զրկում է այդ մակերեսային հենարաններից: Այն ստիպում է մեզ փնտրել ոչ թե պարզապես Նրա ձեռքի պարգևները կամ Նրա խոսքի սփոփանքը, այլ հենց Նրան՝ Արարչին: Այսպիսով՝ լռությունը դառնում է այն սրբագործող հնոցը, որտեղ զտվում է մեր հավատքը՝ եսակենտրոն ակնկալիքներից անցում կատարելով դեպի բացարձակ ու անձնվեր վստահություն:



Լռությունը՝ որպես գերագույն ներկայություն և աստվածճանաչողության դուռ: Սուրբ Գրքում Աստծու լռությունը երբեք դատարկություն չէ, այլ Նրա անպարագրելի վեհության արտահայտությունը: Երբ Եղիա մարգարեն՝ հուսահատ ու հալածական, կանգնած էր Քորեբ լեռան վրա, Աստված նրան հայտնվեց, և Եղիան Աստծուն գտավ ոչ թե սարսափազդու տարերքների՝ հզոր քամու, երկրաշարժի կամ կործանարար կրակի մեջ, այլ «մեղմ ու բարակ քամու ձայնի»՝ բացարձակ լռության հեզության մեջ (Գ Թագ. ԺԹ 11–12): Աստվածային այս խորհրդավոր լռությունը ոչ թե հեռացում է մարդուց, այլ ընդհակառակը՝ հրավեր դեպի ավելի խոր հաղորդակցություն, որտեղ բառերն այլևս ի զորու չեն արտահայտելու հոգու և Աստծու կապը, ինչպես սաղմոսերգուն է հորդորում. «Լռի՛ր Տիրոջ առաջ և սպասի՛ր Նրան» (Սաղմ. ԼՋ 7): Այդ լռության մեջ է ծնվում այն իմաստնությունը, որ ճեղքում է մարդկային սահմանափակ մտքի կաղապարները: Աստված չի անտեսում մեր տառապանքը. Նա լռությամբ տառապում է մեզ հետ՝ ճիշտ այնպես, ինչպես լռությամբ կրեց Պիղատոսի դատավարության ողջ անարդարությունը՝ պատրաստվելով ամենամեծ հաղթանակին՝ Հարությանը:

Ճշմարտության վկայությունը ժամանակակից աշխարհում

Այսօրվա աշխարհը մեծապես նման է Պիղատոսի դատավարությանը: Այն լեցուն է աղմուկով, տեղեկատվական հեղեղով, ստով և թվացյալ ճշմարտության դարաշրջանի հարաբերապաշտությամբ, որտեղ յուրաքանչյուրն ունի «իր սեփական ճշմարտությունը»: Քրիստոնյան կոչված է վկայելու Ճշմարտության մասին ոչ միայն հռետորությամբ կամ դատարկ բանավեճերով, այլև քրիստոսանման կյանքով, և երբ անհրաժեշտ է, այո՛, աստվածահաճո լռությամբ: Ժամանակակից աշխարհի աղմուկի մեջ քրիստոնեական լռությունը կարող է դառնալ ամենահզոր քարոզը, որ ստիպում է մարդկանց կանգ առնել և տեսնել՝ Աստված չի լռում, Նա խոսում է Աստվածաշնչով:

Ամենամեծ ճշմարտությունն այն է, որ Աստված երբեք չի լռել և չի լռում: Այն, ինչ մենք ընկալում ենք որպես լռություն, իրականում Նրա՝ արդեն իսկ ասված Խոսքի արձագանքն է մեր հոգիներում: Աստված բացարձակ կերպով խոսել է Իր Որդու միջոցով. «Այն Աստվածը, որ հնում բազում անգամներ և զանազան ձևերով մարգարեների միջոցով խոսեց մեր հայրերի հետ, այս վերջին օրերին մեզ հետ խոսեց Իր Որդու միջոցով» (Եբր. Ա 1–2): Այսօր Աստված շարունակում է կենդանի կերպով խոսել Սուրբ Գրքի՝ Աստվածաշնչի միջոցով: Աստվածաշունչը սոսկ պատմական գիրք չէ, այլ Աստծու կենդանի, ներկա և անդադար հնչող ձայնը:

«Աստծու խոսքը կենդանի է, զորավոր և ավելի հատու, քան ամեն մի երկսայրի սուր» (Եբր. Դ 12):

«Քո խոսքը ճրագ է իմ ոտքերի համար և լույս՝ իմ շավիղների համար» (Սաղմ. ՃԺԸ 105):

Երբ մեզ թվում է, թե երկինքը լուռ է, մենք պարզապես պետք է բացենք Սուրբ Գիրքը: Այնտեղ է, որ Աստծու ձայնը հաղթահարում է դարերի հեռավորությունը և խոսում անձամբ մեր սրտերի հետ՝ մեր հարցերին տալով պատասխաններ, որոնք ոչ թե սահմանափակում են միտքը, այլ ազատագրում այն: Հիսուսն Ինքն է խոստանում. «Եվ կճանաչեք ճշմարտությունը, և ճշմարտությունը կազատի ձեզ» (Հովհ. Ը 32):

Այս ազատագրումը, որի մասին խոսում է Աստվածորդին, հենց ժամանակակից հարաբերապաշտության կապանքներից ձերբազատվելն է: Այն աշխարհում, որտեղ ճշմարտությունը վերածվել է անհատական կարծիքի կամ քաղաքական հարմարանքի, Աստվածաշունչը մնում է որպես միակ անսասան հենարանն ու բացարձակ հայտարարը: Աստվածաշունչը թերթելիս մարդը հասկանում է, որ երկնքի թվացյալ լռությունը ոչ թե Աստծու բացակայությունն է, այլ Նրա սպասողական, հայրական սերը, որ մեզ հրավիրում է լսելու Իր՝ արդեն իսկ հնչեցրած հավիտենական Խոսքը:

Ուստի երբ աշխարհն իր աղմուկով փորձում է խլացնել աստվածային պատգամները, քրիստոնյայի առաքելությունն է այդ Խոսքի կենդանի արձագանքը լինելը: Մենք կոչված ենք ոչ թե կրկնելու Պիղատոսի հուսահատ ու թերահավատ հարցադրումը, այլ ապրելու այն մեծագույն գիտակցությամբ, որ Ճշմարտությունը մեզ հետ է, որ այն հայտնված է և հասանելի յուրաքանչյուրին, ով պատրաստ է խոնարհությամբ բացելու Աստվածաշունչը: Աստծու խոսքի լույսի ներքո լռությունը վերածվում է երկրպագության, իսկ կյանքը՝ Ճշմարտության հաղթական վկայության, որն ի զորու է փոխելու սրտեր և ազատագրելու հոգիներ:

Աստվածաշնչյան լռություն

Աստվածաշնչյան հայտնության մեջ լռությունն Աստծու ամենախորհրդավոր գաղտնիքների, Նրա բացարձակ սրբության և դատաստանի նախերգանքն է: Երբ մարդկային միտքն սպառում է իր ճառախոսական հնարավորությունները, լռությունը դառնում է այն միակ հոգևոր հարթությունը, որտեղ Արարիչն ու արարածը հանդիպում են առանց միջնորդների:


Սուրբ Գիրքը մեզ սովորեցնում է, որ Աստծու մեծագույն գործերը հաճախ հասունանում են հենց այդ բացարձակ լռության մեջ: Սոփոնիա մարգարեն, կանխազգալով Տիրոջ ներկայության աներևույթությունը, պատգամում է. «Լռի՛ր կացեք Ամենակալ Տիրոջ առաջ, որովհետև մոտ է Տիրոջ օրը» (Սոփ. Ա 7): Այս հրամայական լռությունը ոչ թե վախի, այլ երկյուղածության և ակնածանքի արտահայտություն է: Այն պատնեշ է երկրային հպարտության և ամբարտավանության դեմ, որովհետև Աստծու դատաստանի և ողորմության առջև մարդկային բոլոր արդարացումները հալչում են: Այս իրողությունն իր տիեզերական գագաթնակետին է հասնում Հայտնության գրքում, որտեղ երկնային անմարմին զորքերի անդադար փառաբանությունը մի պահ ընդհատվում է խորին խորհրդավորությամբ. «Եվ երբ յոթերորդ կնիքը բացեց, երկնքում մոտ կես ժամ լռություն եղավ» (Հայտն. Ը 1): Երկնային այս լռությունը նախորդում է Աստծու վերջնական հայտնությանը. այն ցույց է տալիս, որ կան աստվածային խորհուրդներ, որոնց առջև նույնիսկ հրեշտակներն են պապանձվում: Լռությունը դառնում է զորության կուտակում և սրբագործման տարածք:

Մարդկային տառապանքի և սպասման համատեքստում լռությունն ունի նաև դաստիարակչական ու փրկագործական նշանակություն: Աստվածային լռությունը մարդուն հնարավորություն է տալիս հրաժարվելու մակերեսային պատասխաններից, որոնք հաճախ կաղապարում են միտքը: Լուռ սպասումը զտում է հավատքը՝ թույլ տալով, որ մարդը հասունանա և պատրաստ լինի ընդունելու Աստծու կամքն այնպիսին, ինչպիսին որ կա, այլ ոչ թե այնպիսին, ինչպիսին ինքն էր պատկերացնում: Երբ Քրիստոս լռում էր Պիղատոսի առջև, Նա գործում էր աստվածաշնչյան հենց այս տրամաբանությամբ: Նրա լռությունը դատարկ պատասխան չէր, այլ հենց Աստծու այն զորության դրսևորումը, որը շուտով պիտի հաղթեր մահվանը:

Շարունակելի

Հովհաննես սրկ. ԷՎԻՆՅԱՆ
Դիանա ՔՈՉԱՐՅԱՆ

Հրաչյա Աճառյան գիտնականը



Հայ և համաշխարհային գիտության, հոգեմտավոր գործունեության անդաստաններում հերկ արած անմոռանալի նվիրյալներից է Հրաչյա Աճառյանը, որի անունը չի իջնում և երբեք չի իջնելու գիտության պսակակիրների անմահության հուշապատից, և որը համատեղում է մասնագիտական ու մարդկային մի շարք արժանիքներ՝ խոշոր գիտնական, որակաշատ մանկավարժ, բարձրարժանիք մարդ. չափազանց հազվադեպ են այսքան որակներ ընդելույզ երևում մեկ անհատի մեջ:

Աճառյանը մի ամբողջ գիտական գանձարան է թողել հայ լեզվաբանության ասպարեզում. կատարել մի ամբողջ գիտական օջախի աշխատանք, որի կարևորությունն ու արժեքն ահռելի է հայ և, վստահաբար, համաշխարհային լեզվաբանական գիտության համար:

Երևելի այրի մեծակշիռ աշխատություններից մեկը, որ մեծակշիռ է նաև համաշխարհային գնահատումներով, «Հայերէն արմատական բառարանն» է: Լեզվաբանությունը արմատական բառարան գիտաբառով անվանում է ստուգաբանական բառարանները: Վերջիններիս մեջ ստուգաբանվում են բառերը. բացահայտվում ու ներկայացվում են դրանց ծագումն ու պատմությունը. այսօրինակ բառարան կազմողը ուրիշ պարտականություն չունի: Աճառյանը, սակայն, արել է ավելին. նա տվել է գլխաբառերի հոլովման ու խոնարհման ձևերը, լուրջ և տևական աշխատանք է կատարել՝ պարզելու համար հոլովման տեսանկյունից դժվարություն ներկայացնող մի շարք արմատական բառերի հոլովումները. ուղղակի չի վերցրել դրանք ու բերել իր բառարան: Աճառյանը նշել է նաև արմատի գործածության ժամանակը, վկայակոչել տվյալ արմատից կազմված բառեր՝ նշելով գործածության տեղերը. նպատակը՝ ցույց տալ, թե արմատը ինչ աշխուժություն ունի հայերենում, հեղինակի բառերով ասած, «կղզիացած և քիչ գործածական մի ձև՞ է, թե՞ աճած ու զարգացած բառ», նաև՝ թե արմատը ինչ ձևափոխությունների և ինչ թեքումների է ենթարկվել բառակազմության ժամանակ: Հեղինակը հատուկ բերել է այնպիսի բառեր, որոնց մեջ արմատը թե՛ սկզբում է, թե՛ մեջտեղում, թե՛ վերջում. հատկապես շատ է բերել բառավերջի արմատներով բառերը, քանզի դրանք բառարաններում գտնելը, բառարաններից հավաքելը ավելի դժվար է: Ուշադրության են արժանացել նաև բառերի գրչագրական տարբերակները: «Արմատականն» արժեքավոր է նաև հնդեվրոպաբանության տեսանկյունից. «Ստուգաբանություն» բաժնում նախ դրված է բառի հնդեվրոպական մայր ձևը, հետո՝ դրանից առաջացած համապատասխան ձևերը՝ զանազան քույր լեզուներում: Նաև ամեն մի բնիկ հայերեն բառի դիմաց տրված է համապատասխան հնդեվրոպական մայր ձևի համառոտ պատմությունը: Առանձին բաժին է նվիրված ստուգաբանությունների պատմությանը: Առկա են նաև արմատների բարբառային տարբերակները՝ երեսուն, երբեմն ավելի բարբառների, նաև մի քանի ենթաբարբառների ձևեր: Այս փառահեղ բառարանով Աճառյանը հայերենագիտական հետազոտությունների ոլորտում մի նոր ուղղություն էլ է բացել՝ պարզել հայերենի ազդեցությունը շրջակա օտար լեզուների վրա. «Գիտությունները առհասարակ զբաղվել են՝ ուսումնասիրելով հայերենի ծագումը, զարգացումը և նրա կրած ազդեցությունը օտարներից: Ո՛չ մեկը չի հետաքրքրված, թե հայերենն էլ ուրիշների վրա ինչ ազդեցություն է գործել»,– գրել է մեծ գիտնականը:

Գիտության զարգացումների հոլովույթում երբեմն ծնվում են աշխատություններ, որոնք դուրս են գալիս ազգային, պետական շրջագծերից և դառնում համաշխարհային, համամարդկային արժեք, նման աշխատությունների շարքից է «Լիակատար քերականություն հայոց լեզվի. համեմատությամբ 562 լեզուների» ընդգրկուն աշխատությունը: Այստեղ, ինչպես վերնագիրն է հուշում, հայերենը, իսկ ավելի ստույգ՝ նրա ձևաբանական համակարգը, համեմատված է 562 լեզուների հետ՝ բացառությամբ վերջին հատորի, որը նվիրված է իմաստաբանությանը, բառաքննությանն ու շարահյուսությանը: Հիշյալ բազմահատոր հետազոտությունը մի ինքնօրինակ լեզվաբանական հանրագիտարան է, որը, մեր կարծիքով, լեզվի խուզարկուներից, գիտնականներից բացի, հետաքրքրությամբ ու հաճույքով կընթերցեն նաև ընդհանրապես մայրենի և օտար լեզուների նկատմամբ սեր ու հետաքրքրություն տածողները:

Այս աշխատությամբ մեր մեծ լեզվաբանը իր ժողովրդին հնարավորություն տվեց մայրենի լեզվով ծանոթանալու բազմաթիվ օտար լեզուների ձևաբանական համակարգերի, այս աշխատությամբ հայերենին բախտ ու պատիվ վիճակվեց նման խորքային համեմատական ուսումնասիրության ենթարկվելու և իր միջոցով բազմաթիվ օտար լեզուների նշված համակարգերը ներկայացնելու: Մեզ հայտնի չէ մեկ այլ լեզու, անգամ մեծ, հզոր ազգերի, որին այդպիսի բախտ ու պատիվ վիճակված լինի, ինչպես նաև մեկ այլ ժողովուրդ կամ ժողովուրդներ, որին կամ որոնց մայրենի լեզվով աշխարհի լեզուների մեծ մասի ձևաբանական պատկերը ներկայացվելու բախտն ու պատիվը վիճակված լինի:

Հայ և համաշխարհային լեզվաբանական գիտության կոթողային արժեքներից է «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունը: Աճառյանն առաջինն է և դեռևս միակը, ով հայերենն ուսումնասիրել է նման խոր, համակողմ ու ընդգրկուն կերպով՝ պատմաժամանակային ու տարածական գրեթե բոլոր դրսևորումներով, սկզբից գրեթե մինչև իր ապրած ժամանակները: Հետազոտել ու ներկայացնել որևէ լեզվի պատմությունը՝ նշանակում է ինչ-որ չափով հետազոտել ու ներկայացնել տվյալ լեզուն կրող ազգի պատմությունը, վեր հանել նրա հոգեկան կերտվածքը, քանզի լեզուն անխզելիորեն կապված է ազգի պատմության ու հոգեկան կերտվածքի հետ, ուստի աճառյանաստեղծ այս աշխատությունը ինչ-որ իմաստով արտացոլանքն է հայ ժողովրդի պատմության ու հոգեկան կերտվածքի: Հետազոտության բազմաթիվ էջեր ներառում են այս կամ այն տեսանկյունից ուշագրավ ու արժեքավոր բառասյունակներ: Չգալի չափով լեզվական նյութի առկայությունն էլ աշխատությանը տալիս է սկզբնաղբյուրային արժեք:

Հայերենագիտությանը Հրաչյա Աճառյանի մատուցած մյուս ընծան «Հայոց անձնանունների բառարանն» է, որ ներառում է հայոց մեջ դարեր շարունակ գործածություն ունեցած անձնանունների ծագումը և ստուգաբանությունը, դրանց համապատասխան ձևերը, հեղինակի բառերով ասած՝ «մի քանի կարևոր լեզուներով, նաև անձնանունների փաղաքշական ու ժողովրդական ձևերը՝ այն ժամանակվա բարբառներում եղած»: Եվ այս դեպքում էլ արված է ավելին, քան պահանջվում է: Հիշյալ կարգի բառարանները, ինչպես անվանումն է հուշում, տալիս են անձնանունների բացատրությունները, Աճառյանի կազմած բառարանը ներկայացնում է տվյալ անունը կրած նշանավոր, նաև ոչ նշանավոր մեր ազգակիցներին, նրանց սեղմ ու ամփոփ կենսապատումները, ասել կուզի՝ բառարանս ունի նաև տեղեկատվական-հանրագիտարանային արժեք. ինչ-որ իմաստով անձնանունների պատմությանն ու գործածելիությանը վերաբերող հետազոտություն է, նշանավոր մարդկանց մի յուրատեսակ փոքր հանրագիտարան: Բառարանի արժեքավոր կողմերից մեկն էլ այն է, որ անունները տրված են ոչ միայն ուղիղ, այլև թեք հոլովներով. երբեմն դժվար է այս կամ այն անվան ճիշտ հոլովաձևը որոշելը:

Ցավալի իրողություն է, որ հավանաբար իբրև օտարամոլության դրսևորում՝ հայ մանուկները՝ Հայկ նահապետի ժառանգները, ոչ հազվադեպ ստանում են օտար անձնանուններ. մեծ հայերենագետի այս կոթողային աշխատանքը, այսպիսով, ձեռք է բերում նաև գործնական արժեք. ցույց է տալիս, թե որքան գեղեցիկ և խորիմաստ հայկական անձնանուններ կան: Իրողություն է նաև, որ քիչ չեն օտար անձնանուններից կազմված հայկական ազգանունները, և այս կամ այն ազգանվան՝ օտար անձնանունից բաղադրված լինելը բացահայտելն ու գիտակցելը կարող են հիմք ծառայել դրանց հայացման համար, ինչը, մեր խորին համոզմամբ, անհրաժեշտություն է:

Ինչպես «Հայոց լեզվի պատմություն» աշխատությունը, այնպես էլ «Հայոց անձնանունների բառարանը» որոշակի ուրվագիծ է տալիս Հայոց աշխարհի ապրած դարերի ու հայոց հոգուն բնորոշ կերտվածքի ինչ-ինչ կողմերի մասին: Ի վերջո՝ սա էլ հայկական անձնանունների պատմությունն է: Բարձրարժեք է բառարանը նաև որպես աղբյուր: Իր այս աշխատության գնահատականը տվել է հենց հեղինակը՝ առաջաբանում միանգամայն իրավացիորեն գրված հետևյալ նախադասությամբ. «Այսպիսի ընդարձակ ծավալով ու մանրամասնությամբ և բծախնդիր ճշտությամբ աշխատություն ոչ մի լեզվի մեջ գոյություն չունի»:

Անշուշտ, մեծ արժեք ունեն նաև «Հայ բարբառների դասակարգումը» (ֆրանսերեն), «Հայ բարբառագիտություն», «Ս. Մեսրոպի և գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը», «Հայոց գրերը» և այլ աշխատանքներ:

Աճառյանից իբրև անգին ընծա մնացած գիտական վաստակի մյուս առանձնահատկությունը բազմակողմանիությունն է՝ լեզվաբանության մեջ՝ մասնավորաբար, և գիտության մեջ՝ առհասարակ: Գիտության, ընդհանրապես մարդկային գործունեության որևէ բնագավառի ներկայացուցիչ, որպես կանոն, գործունեություն է ծավալում տվյալ գիտության, տվյալ բնագավառի մեկ ուղղությամբ. հայ լեզվաբանության մեջ, օրինակ, արդի հայերենի, հայոց լեզվի պատմության (վերջինիս մեջ էլ՝ գրաբարի, միջին հայերենի, վաղ և երկճյուղ աշխարհաբարների), ոճագիտության, բարբառագիտության և այլ ուղղություններից որևէ մեկում, գրականագիտության մեջ՝ հին և միջնադարյան, նոր, նորագույն գրականության, իրավագիտության մեջ՝ քաղաքացիական, քրեական, սահմանադրական, միջազգային, հարկային իրավունքի և այլ ուղղություններից որևէ մեկում և այլն: Փոքր է այն գիտնականների թիվը, որոնց հետաքրքրության կենտրոնակետում եղել է իրենց ասպարեզն ամբողջությամբ, որոնք ուսումնասիրել են իրենց ասպարեզն ամբողջությամբ: Տարբեր ժամանակներում գիտության տաճար են մտել մարդիկ, ովքեր, իրենց գիտական աշխատանքի հիմնական ուղղությունից զատ, անդրադարձ են կատարել նաև այլ ուղղությունների կամ գրեթե հավասարաչափ զբաղվել են տարբեր ուղղություններով: Հրաչյա Աճառյանն ուսումնասիրել է հայերենը, կարելի է ասել, ամբողջովին՝ պատմաժամանակային, տարածական, օտար լեզուների հետ ունեցած հարաբերությունների գրեթե բոլոր դրսևորումներով. տարատեսակ գիտական գրվածքներով՝ մենագրություններով, հոդվածներով, զեկուցումով և այլն, անդրադարձել է հայերենի ամենատարբեր ուղղությունների՝ պատմություն, օտար լեզուների հետ ունեցած ընդհանրությունների ու տարբերություններ, բարբառներ, արմատական բառեր, անձնանուններ, գրերի ստեղծում և այլն: Լեզվաբանության մեծերից մեկը նաև հայերենագիտության մի շարք ճյուղերի՝ հայոց լեզվի պատմության, հայ անձնանվանագիտության, հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիրն է, կարծիք կա՝ նաև հայ բարբառագիտության: Ինչպես և հայ լեզվաբանական մատենագիտության հիմնադիրն է. «Արմատականի» ստեղծման համար օգտագործած գրքերի ու հոդվածների ցուցակն այնքան մեծ է (3800 անուն), որ հեղինակը նպատակահարմար չի համարել այն կցել բառարանին. այդ ցուցակը մի առանձին գիրք էր կազմում՝ «Հայ լեզուաբանական մատենագիտութիւն» վերտառությամբ, որն սպասում էր տպագրության. ավաղ, դեռ չի տպագրվել: Մեծ գիտնականը առաջիններից մեկն է հայոց մեջ խոսել լեզվի հոգեբանական, բնախոսական, հասարակական և այլ կողմերի մասին՝ նպաստելով դրանք ուսումնասիրող գիտակարգերի հաստատմանը:

Մեծ լեզվաբանը մտավոր որոնումներ է կատարել նաև հայ ձեռագրագիտության, պատմագիտության, գրականագիտության ասպարեզներում, հավաքել վիմագրական ու բանահյուսական նմուշներ՝ կազմելով «Հայարձան» և «Պոլսահայ անգիր բանահյուսություն» ժողովածուները: Աճառյանի գրչին պատկանող որոշ աշխատանքներ դեռևս չեն մտել տպարան:

Հայագիտության լուսե դեմքերից մեկը ընթերցել է վիթխարածավալ մասնագիտական գրականություն, քննել վիթխարածավալ աղբյուրագիտական նյութ, ինչը բնականաբար խլել է վիթխարի եռանդ ու ժամանակ: Աճառյանի գիտական սխրանքների տարիներին, հասկանալի է, չկային մերօրյա գիտատեխնիկական հրաշքները՝ համակարգիչը, համացանցն ու արհեստական բանականությունը՝ մտավոր աշխատանքով զբաղվող անհատների գործը հեշտացնող ու արագացնող. այսօր բավական է համացանցի որոնման տողում գրել անհրաժեշտ բառը, անգամ դրա մի մասը, և գրեթե անմիջապես այդ բառի ցույց տված, անվանած առարկայի, երևույթի, անձի վերաբերյալ մեզ հրամցվում է զգալի քանակությամբ տեղեկություն՝ խնայելով մեր եռանդն ու ժամանակը: Եթե մեծ լեզվաբանի օրոք գիտության և տեխնիկայի այս հրաշքները լինեին, ապա, համոզում ունենք, նա ավելին կստեղծեր, քանի որ ստիպված չէր լինի աշխատանքի զուտ տեխնիկական կողմի վրա այդքան եռանդ ու ժամանակ ծախսել: Այսօրինակ դժվարությունների մասին խոսել է նաև ինքը՝ երախտավոր այրը: Ու չնայած այդ ամենին՝ հոգնություն բառի իմաստը չիմացող մտքի մեծ ծառաներից մեկը ծնունդ է տվել լեզվաբանությանը վերաբերող բազմահատոր աշխատությունների և հարյուրավոր հոդվածների՝ տասնյակ հազար էջերը գերազանցող:

Լեզվաբանի կողմից գիտական քննության ենթարկված մի շարք բարբառների կրողներ զոհ են գնացել 1915-ի մեծ հայասպանությանը, և միայն նրա կողմից գրի առնվելու շնորհիվ են այդ բարբառները պահպանվել: Հայագիտության հսկաներից մեկը, այսպիսով, հավաքել է հսկայաքանակ լեզվական նյութ՝ տարբեր պատմաշրջաններում գործածված գրական բառեր, բարբառային բառեր, օտար լեզվամիավորներ և այլն. այս տեսանկյունից էլ նա յուրահատուկ է:

Հետաքրքիր է իմանալ Հրաչյա Աճառյանի մոտեցումը գիտության լեզվի նկատմամբ. իր գիտական աշխատությունները մեծ հայերենագետը գրում էր պարզ ու հասկանալի լեզվով: Հռչակավոր լեզվաբանի երբեմնի սանը՝ Գառնիկ Ստեփանյանը, իր հեղինակած «Աճառյանի հետ» գրքում նկատում է. «Ոչ միայն խոսում էր պարզ, այլև գրում: Վկա՝ նրա «Լիակատար քերականությունը», որը կարդացվում է գեղարվեստական երկի հաճույքով, շնորհիվ մտքի աճառյանական բյուրեղյա հստակության»: Մեր խորին համոզմամբ՝ պարզ լեզվով գրելը ոչ միայն մեծությանը բնորոշ պարզության, այլև նյութը լավ, փայլուն իմանալու և նույնկերպ ներկայացնելու ունակության դրսևորում է, մի բան, որը խիստ կասկածելի է ճռճռան, «ակադեմիական» լեզվով գրված գիտական գրվածքների դեպքում:

Այսպիսով՝ հանձին Հրաչյա Աճառյանի՝ մեզ ներկայանում է գիտության աշխարհի մի յուրօրինակ մեծություն, որը հայոց լեզու կոչվող անհատակ գանձարանի դուռը բացող սերունդների հավերժական առաջնորդներից է, որի հետ ժամանակների հեռվից անգամ խորհրդի է նստում այդ անհատակ գանձարանը մուտք գործած գրեթե յուրաքանչյուր գանձախույզ, և որի շնորհիվ միշտ ու ամենուր իր ողջ փառահեղ նկարագրով ներկայանում է նորին մեծություն ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների
թեկնածու

Վիլյամ Սարոյանի անգնահատելի ավանդը հայ-ամերիկյան գրականության մեջ



Սկիզբը՝ թիվ 13

Վիլյամ Սարոյանը քաջ գիտակցում էր, որ ինքն անկրկնելի հեղինակ է: Այդուհանդերձ ամերիկահայ գրողը չգիտեր ինչպես ստեղծել իր գրական նախօրինակը: Նա ստեղծում է պատմվածքներ, որոնք ավելի շատ նման են կիսաէսսեների: Իր վաղ շրջանի պատմվածքներից մեկում Սարոյանը գրում է. «Ես պատմություններ պատմող եմ, և իմ բոլոր պատմությունների կենտրոնում մարդ արարածն է: Ես ուզում եմ պատմել իմ պատմությունը յուրօրինակ ձևով՝ մոռանալով հռետորական կանոնները և կոմպոզիցիոն հնարքները: Ես ունեմ ասելիք, բայց չեմ ցանկանում խոսել Բալզակի ձևով: Ես ինձ արվեստագետ չեմ համարում: Ես իրապես չեմ հավատում մարդկային քաղաքակրթությանը և բնավ խանդավառված չեմ առաջընթացի գաղափարով: Երբ մարդիկ մի հսկա կամուրջ են կառուցում, ես դա չեմ ողջունում, և երբ ինքնաթիռը հատում է Աթլանտիկ օվկիանոսը, ես չեմ մտածում. «Ինչ հրաշալի դարաշրջան է»: Ինձ չի հետաքրքրում ազգերի ճակատագիրը, իսկ պատմությունն ինձ ձանձրույթ է պատճառում: Պատմություն ասելով՝ ինչ են հասկանում այն մարդիկ, որոնք գրում են այդ պատմությունը և հավատում են դրան: ....Ինչպե՞ս պատահեց, որ մարդու միայնությունը խախտվեց: Ինչպե՞ս պատահեց, որ մարդկային բարեպաշտությունը մղվեց դեպի մահվան ու կործանման սարսափելի տիրույթը: Ես չեմ հավատում բիզնեսին, իսկ արդյունաբերական բոլոր սարքերը անպիտան բաներ եմ համարում. նկատի ունեմ թե՛ հաշվիչ մեքենան, թե՛ ավտոմեքենան, թե՛ ջերմաքարշը, թե՛ օդանավը և թե՛ հեծանիվը: Ես իմաստ չեմ տեսնում ճանապարհորդելու մեջ....: Արդյոք գոյություն ունի՞ ավելի մեծ ճանապարհորդություն, քան մտքի ճանապարհորդությունը ողջ կյանքի ընթացքում: Արդյոք որևէ ուղևորություն ունի՞ ավելի գեղեցիկ ավարտ, քան մահը»:

Իր «Յոթանասուն հազար ասորի» պատմվածքում Սարոյանն էլ ավելի ուշագրավ գաղափարներ է արտահայտում. «Իմ միակ ցանկությունն է խոսել մարդկային եղբայրության մասին: Սա լուրջ ու արժեքավոր պնդում է: Սովորաբար մարդն ամաչում է նման պնդում անելուց: Նա վախենում է, որ իմաստուն մարդիկ կծիծաղեն իր վրա: Ես թերահավատ եմ տարբեր ռասաների հանդեպ: Ես չեմ վստահում կառավարություններին: Ես կյանքը կյանք եմ համարում այն դեպքում, եթե այն միաձուլված է ժամանակի հետ: ....Երկրագնդի միակ իրական ազգությունը երեխաների ազգությունն է, մինչև որ նրանք կսովորեն խոսել որևէ լեզվով: Մնացած բաները լոկ պատրանք են. այն, ինչ մենք կոչում ենք քաղաքակրթություն, ատելություն, սարսափ, զորավոր լինելու տենչանք....: Մենք մեծանում ենք և տիրապետում որևէ լեզվի: Մենք ճանաչում ենք աշխարհն այն լեզվի միջոցով, որ գիտենք: Մենք չենք ճանաչում աշխարհը բոլոր լեզուների միջոցով: Երբեմն մարդը տեսնում է իրականությունը՝ առանց լեզվի օգնության: Նա դա անում է լռության միջոցով: Մենք մեկուսացնում ենք մեզ մեր լեզվի օգնությամբ....: Եթե ես ուզում եմ ինչ-որ բան անել, ապա դա համահասկանալի լեզվով խոսելն է»:

Հետաքրքրական է, որ Սարոյանն ավելի գրավիչ էր 20-րդ դարի առաջին կեսի ընթերցողների համար: Բանն այն է, որ նա տեսել էր, այսպես կոչված, Մեծ ընկճախտի շրջանը և ներազդվել էր դրանից: Այդ տխուր ժամանակներն անխուսափելի կնիք էին դրել գրողի ստեղծագործությունների վրա, այդ իսկ պատճառով վերջիններս առավել լավ կարող էին ընկալել այն մարդիկ, որոնք տեսել էին սոցիալ-տնտեսական ցնցումների՝ վերը հիշատակված շրջանը:

Գրողն անընդհատ որոնում էր մի ոճ, որը լավագույնս կարտահայտեր իր աշխարհայացքը, և այդ ոճական փնտրտուքները շարունակվեցին մինչև նրա գրական գործունեության ավարտը:

Սարոյանը հենց սկզբից զգուշացնում է ընթերցողին, որ ինքը չի գրելու դասական սյուժետային կանոններով՝ սովորական նախաբանով, միջնամասով և լուծումով: Երբեմն նա խառնում է այս երեքի դասավորությունը, ինչը բավականին յուրօրինակ մոտեցում է ստեղծագործության դիպաշարի կառուցման հարցում:

Վիլյամ Սարոյանի գրվածքների վերընթերցումն ապշեցնում է ընթերցողին ոչ այնքան փիլիսոփայական պնդումներով, որքան գրողի նվազ հավակնոտ ձգտումներով՝ իր այլաբանական պատմվածքների միջոցով ցույց տալու մարդկանց հիմնական առաքինությունները: Այդ մարդկանց կյանքի շարժիչ ուժը, անկասկած, սերն է:

Սարոյանի հերոսներին հաճախ կարելի է հանդիպել խորտկարաններում, վարսավիրանոցներում կամ էլ այգիներում ու դաշտերում, որտեղ նրանք գյուղատնտեսությամբ են զբաղվում: Այսպես, օրինակ, գրողի հորեղբայրը փուշ ու տատասկով լցված անապատային հողում փորձում է նուռ աճեցնել: Այդ մրգի ընտրությունը բնավ էլ պատահական չէր. նուռը խորհրդանշական մրգերից է, որ հայ տարագիրներին հիշեցնում է Հայաստան աշխարհի մասին: Բանաստեղծական ոգու տեր Սարոյանն անընդհատ անորսալի ճշմարտություններ է որոնում: Սրանք այնպիսի ճշմարտություններ են, որոնք վրիպում են առօրյա հոգսերով ծանրաբեռնված պարզ ու հասարակ մարդկանց ուշադրությունից:

Ոմանց համոզմամբ՝ Սարոյանի առավել մնայուն ստեղծագործություններից են երեխաներին նվիրված պատմվածքները: Մանուկներին նվիրված լավագույն երկերը հավանաբար ընդգրկված են վաղ շրջանի պատմվածաշարերում՝ «Փոքր երեխաներ» (1937) և «Իմ անունն Արամ է» (1940): Սարոյանի կերտած մանկական կերպարներն իրապես անկրկնելի են. կատարելապես մանկական են, բայց միևնույն ժամանակ ի զորու են իրականությունն ընդունելու այնպես, ինչպես այն կա: Նրանք ի վիճակի են նաև հեռանալու այդ իրականությունից, եթե դա իրո՛ք անհրաժեշտ է: Սարոյանի նկարագրած երեխաներն ունեն տիպիկ մանկական հետաքրքրություններ. սիրում են լողալ ու վազել: Նրանց բնավորության գծերից են մանկան անմեղությունը և անաղարտությունը: Հայ մանուկներն ասես կրողն են հին աշխարհի փիլիսոփայության, բարյացակամության և բարության: Հայազգի երեխաներն օժտված են բնազդային իմաստությամբ: Սարոյանի գրվածքներում կարելի է տեսնել հրաշալի հումոր, մեղմություն և մանկան իսկական հոգեբանություն, ինչպես, օրինակ, «Երիցական երգչախմբի տղաները» պատմվածքում: Արամն իր ընկերների հետ ակամա դառնում է երգչախմբի անդամ՝ շնորհիվ իր ձայնային տվյալների, որոնցում ինչ-որ քրիստոնեական բան կար:

Եթե պատմվածքի ժանրում ամերիկահայ գրողը մեծ նվաճումների է հասել, ապա նույն բանը դժվար է ասել նրա վեպերի մասին: Օրինակ՝ «Մարդկային կատակերգությունը» (1943): Թեև վերջինիս մեջ առկա են որոշ գրավիչ ու հետաքրքրական դրվագներ, սակայն ընդհանուր առմամբ այն դժվար է գրական կատարելություն համարել: 1950 թ. Սարոյանը հրատարակում է «Վեսլի Ջեքսոնի արկածները» պատերազմական վեպը: Այստեղ արձակագիրը երևում է նոր կերպարով: Նրա գրական ողջ տոնայնությունը փոփոխության էր ենթարկվել: Ամերիկահայ գրողը կարծես կորցրել է իր հավատը, այսպես կոչված, «գեղեցիկ մարդկանց» հանդեպ:

Լինելով խաղաղության ջատագով՝ Սարոյանը դառնացած էր պատերազմի պատճառով: Ուշագրավ է նաև, որ մեծ գրողը անսպասելիորեն կորցրել էր իր կապը պարզ ու հասարակ մարդկանց հետ, որոնց կենսափիլիսոփայությունը ժամանակին սնուցել էր նրա հավատը: Սարոյանի բանաստեղծական ազատ ոճը փոխարինվեց ծանր փիլիսոփայությամբ, որն անհամատեղելի էր ստեղծագործության դիպաշարի և կերպարների հետ: Ասվածը նույն չափով վերաբերում է ամերիկահայ գրողի «Ռոք Վագրամ» վեպին (1951): Սա մի երկարաշունչ ու ձանձրալի ստեղծագործություն է. հերոսը Ֆրեզնոյում ապրող հայազգի բարմեն է, որ հաջողակ կինոաստղ է դառնում: Սակայն նա այդպես էլ անձնական երջանկության չի հասնում: Թեև Սարոյանի այս ստեղծագործության մեջ բավարար դրամատիկ նյութ կա, սակայն այն չափազանց պարզունակ է ու գերհուզական:

Վիլյամ Սարոյանի հաջորդ երկու վեպերն են՝ «Ծիծաղի առարկա» (1951) և «Մայրի՛կ, ես քեզ սիրում եմ» (1956): Այս երկերում գրողը փորձում է պարզաբանել, թե ինչ է հասուն մարդու սերը, հատկապես սերը տղամարդու և կնոջ միջև: Բայց Սարոյանի ուշադրության կենտրոնում է նաև սերը ծնողների և երեխաների միջև: Գրողը ցանկանում է պատմել ընթերցողին, թե ինչպես է սերը ղեկավարում մարդկանց գործողությունները, սրում մեր խորաթափանցությունը, խորացնում մեր ընկալումը: Սարոյանը մի անգամ ինքն իր մասին ասել է. «Ես պատմություններ պատմող եմ, և իմ բոլոր պատմությունների կենտրոնում մարդ արարածն է: Ես ուզում եմ պատմել իմ պատմությունը յուրօրինակ ձևով»:

Ի վերջո՝ որն է Սարոյանի իսկական տեղն ամերիկյան գրականության մեջ: Ենթադրաբար, հայազգի գրողի տաղանդը ծառայել է երկու կարևոր նպատակների. Վիլյամ Սարոյանը մինչև օրս մնում է լավագույն հեղինակը, որ գրել է մանուկների մասին, իսկ նրա թատերական համարձակ փորձերն ուղի են բացում ավելի մեծ նվաճումների համար: Առաջին հայացքից կարող էր թվալ, թե Սարոյանը չէր հասնի մեծ հաջողությունների՝ իբրև թատերգու: Բանն այն է, որ նրա մոտեցումները չափազանց բնական էին, ազատ ու ոչ ձևական դասական թատրոնի համար: Սարոյանի կյանքի տեսլականը շատ է տարանջատված անձնական դրամատիկ բախումից, իսկ մեզնից շատերը սովոր են այդ բախումը շաղկապելու արդի դրամայի հետ: Ինչևէ, թատրոնը միշտ չէ, որ պետք է զբաղվի շարժառիթների և հասարակական բարքերի ուսումնասիրությամբ: Ամենավաղ շրջանի անգլիական պիեսների դիպաշարերի կենտրոնում ոչ թե անհատական դիմանկարներն էին, այլ այլաբանական վերացարկումներն ու ճոխ արարողությունները: Դրանցում պատմությունը ներկայացվում էր հումանիստական ելակետից: Այդ թատերգությունների գործողությունները ներկայացուցչական ու խորհրդանշական էին: Անկասկած, սխալ կլինի պնդել, թե Սարոյանի թատերգությունները բարոյախոսություններ են, և դրանցում բարու, չարի և հավատի որոշակի գաղափարները ներկայացված են խորհրդանշական ձևով: Սարոյանի «Գեղեցիկ մարդիկ» և «Ջիմ Դենդի» պիեսները, ինչպես նաև ավելի փոքրածավալ թատերական ստեղծագործությունները նման են, այսպես կոչված, բարոյախոսական պիեսների, քանի որ նրանց մեջ նշմարվում է անտարբերություն իրապաշտական, տրամաբանական գործողությունների հանդեպ: Գործող անձը երբեք հանդես չի գալիս որպես անհատականություն. նա մարդկության մի մասնիկն է: Սարոյանի հերոսը ոչ թե անհատ է՝ իր ուրույն ճակատագրով, այլ պարզ ու հասարակ մի մարդ, որ ապրում ու մեռնում է բոլորի պես: Ամերիկահայ գրողի պիեսներում ներկայացված իրավիճակները ոչ թե պարզապես պատահարներ են (թեև դրամատուրգը ջանում է մեզ համոզել, թե դա այդպես էլ կա), այլ ծայրահեղ մարդկային փոխհարաբերությունների խորհրդանշական պատկերումներ:

Սարոյանի թատերական երկերը երբեմն կարող են ծիծաղաշարժ ու անիմաստ թվալ, նախքան մենք խորապես կհասկանանք դրանց իմաստը: Նույնիսկ նրա՝ մրցանակի արժանացած «Քո կյանքի ժամերը» պիեսը մասնակի հաջողության հասավ: Բանն այն է, որ անուրջների սրահում հավաքվող անձինք՝ պորտաբույծներ, փիլիսոփաներ և մարմնավաճառներ, բացահայտորեն երերում են իրականության և երևակայության միջև: Սարոյանի հերոսները հետզհետե վերածվում են անհատականությունների:

Վիլյամ Սարոյանի հանճարեղությունն առավել ցայտուն դրսևորվել է «Ջիմ Դենդի» պիեսում: Վերջինս արտահայտչապաշտական (էքսպրեսիոնիստական) ստեղծագործություն է: Սա մասամբ թատերապար է՝ բալետ, մասամբ՝ այլաբանություն և ի վերջո՝ նման է զարգացող պոեմի: Առաջին հայացքից՝ ամերիկահայ դրամատուրգի երկը հարում է սյուրռեալիզմին: Դրա բեմական ձևավորման հեղինակը Սալվադոր Դալին է: Իրադարձությունները տեղի են ունենում «ձվի կեղևի տակ»: Այստեղ թատերասերը կարող է տեսնել հանրային գրադարանի խղճուկ, բայց միևնույն ժամանակ վեհաշուք փլատակները: Սարոյանի պիեսում մենք տեսնում ենք մի մթին խորշ, որից ծիկրակում են վախեցած երկու երեխաներ: Կարելի է տեսնել նաև քարուքանդ մի աստիճանավանդակ, սրահի փլատակներ և մի փոքր բանտ: Սարոյանի պիեսի հերոսներից յուրաքանչյուրը կարծես մի հրաշք լինի: Գործող անձանցից մեկը պոետ է, որ փնտրում է սուրբ Սկիհը: Դրամատուրգը պատկերում է նաև մի գրադարանավարուհու, որ հագնված է թագուհի Կլեոպատրայի պես: Կա նաև մեկ այլ հետաքրքիր հերոս՝ մի գեր մարդ, որ թափառաշրջիկի տեսք ունի: Այդուհանդերձ նա օժտված է ինչ-որ հմայքով, որով ուզում է երջանկություն պարգևել շրջապատի մարդկանց: Գործող անձանցից մեկն էլ, որ կալանավոր է, պնդում է, թե ինքը բոլորի ընկերն է: Մի խոսքով՝ պիեսի բոլոր հերոսներն այն չեն, ինչ իրենք կուզեին լինել: Միահյուսվելով ու տարանջատվելով ընդհանուր կտավից՝ այդ մարդիկ ստեղծում են գույն, ձայն, շարժում, տրամադրություն և անկրկնելի սարոյանական պարոդիա: Ամերիկահայ գրողի թատերական երկը չունի նախաբան Բերնարդ Շոուի ոգով, որտեղ ներկայացված կլինի պիեսի ծագումնաբանությունը: Սարոյանը վստահ է, որ «պիեսը պետք է խոսի ինքն իր փոխարեն»:

Ավելի ուշ, երբ մենք փորձում ենք գնահատել Սարոյանի ասածը, հայտնաբերում ենք որոշ թույլ կողմեր: Շեշտելով ոգու կարևորությունը «Ջիմ Դենդի» երկում՝ գրողը թերագնահատում է գիտակցական միտքը և դրա զորությունը: Գուցե նա չափազանցության գիրկն է ընկնում իր սկզբնական տեսակետը շեշտադրելու համար: Այդուհանդերձ գիտակցականի և դրա զորության թերագնահատումը նվազեցնում է Սարոյանի գրավչությունը, մինչդեռ գրողն ունեցել է այն ներուժը, ինչի շնորհիվ կարող էր ավելի հետաքրքիր լինել հանդիսատեսի կամ ընթերցողի համար:

Սարոյանը մշտապես զբաղված էր գրական ու թատերական փորձարարությամբ, և հենց այդ որոնումների շնորհիվ էր, որ նա թատերական բնագավառում գտավ այն կարգուկանոնը, որն անհրաժեշտ էր ստեղծագործական նպատակին հասնելու համար: Սարոյանը, օգտագործելով անաղարտ զգացմունքների լեզուն, վերացական ձևով կարողանում է կերտել այնպիսի կերպարներ ու ստեղծել տրամադրություններ, որոնք արտահայտում են նրա խորաթափանցությունը:


Կարճ պատմվածքների վերջին ժողովածուում, որը վերնագրված է «Ողջ Վոյալդը և այլ պատմվածքներ» (1957), հեղինակի ինքնաճանաչումը ստեղծագործության նյութի հետ հասնում է գագաթնակետի: ➥ *էջ 5*

Զաքարիա Ձագեցու ճառը՝ Ամենօրհնյալ Տիրուհի Աստվածածնի և միշտ կույս Մարիամի ննջման մասին

Սկիզբը՝ թիվ 13

Նրան (Աստվածածնին) Եսային նախապես տեսավ [իբրև] թեթև ամպ, որի վրա բազմած՝ Հորից [ծնված] անժամանակ Բանը առաջնորդելով իջավ Եգիպտոս և տապալելով կործանեց նրանց բազմաստված մոլորությունը: Եվ Եգիպտոսը մաքրափայլ կերպով առաջ բերեց սուրբ ու ճգնազգեստ, երջանիկ, հրեշտակակերպ ու նշանավոր վանականների փառահեղ խմբերը, որոնց թվում էին մեծն Անտոնը, Պողոսը և Մակարը ու ճգնավորների քրիստոսազգեստ անհուն բազմությունները: Աստվածածնով վերացան Ադամի անեծքները, նրա միջոցով լուծվեցին Եվայի տաժանելի ու վտանգավոր երկունքի ցավերը: Նա պարգևվեց ու շնորհվեց [մեզ]՝ իբրև անշեջ ճառագայթներով լուսափայլ մի սյուն, որը, լուսավորելով ջահերով, պայծառացրեց տիեզերքը: Քանզի սուրբ և ամենօրհնյալ Աստվածածնի ծնողներն էին Աննան և Հովակիմը՝ Հուդայի ցեղից, որոնք սնվել էին ամենաբազմազան բարեպաշտությամբ և աստվածահաճո կանոններով էին վարում իրենց կյանքը. նրանք իրենց ողջ կյանքում անբիծ ու անարատ էին մնում Տիրոջ և բոլոր մարդկանց առջև:

Եվ սուրբ ու երջանիկ Աննան ամուլ էր, և նրանք ամեն ինչում տրտմում ու տխրում էին այն պատճառով, որ զավակ չունեին: Եվ երանելի Հովակիմը վեր կացավ և իր հովիվների ու հոտերի հետևից ճանապարհ ընկավ: Եվ բարձրանալով լեռը՝ արտասվախառն, բարձրաձայն պաղատանքներով մշտաբուխ աղոթքներ էր մատուցում Բարձրյալին: Եվ Աննան, մտնելով իր ամուսնու անտառախիտ պարտեզը, աղոթում էր մորմոքված ու վիրավոր սրտով: Քանզի Իսրայելի մեջ ամեն մի անզավակ ու ամուլ մարդ նախատված ու արհամարհված էր, որովհետև նրանց ժառանգության հույսն այս երկրի վրա էր, և Մովսեսի միջոցով նրանց ավանդված պատվիրանը երկրավոր բնույթ ուներ: Դրա համար էլ նրանք ավելի մեծ համարձակություն ունեին Աստծու առջև իրենց անարատ վարքի պատճառով: Եվ հրեշտակը հայտնվեց Աննայի առջև ու տվեց բերկրալից ու ավետաբեր ողջույնը: [Հրեշտակն] ասում էր. «Ողիանալով՝ զավակ պիտի ծնես և նրան պիտի նվիրես Տիրոջը Աստծու տաճարում»: Եվ [հրեշտակը] հեռանալով հայտնեց [այն մասին, որ այդ զավակը] կնքված ընդունարան է լինելու Աստծու անսահմանելի ու անճառելի Բանի համար: Եվ դարձյալ ասում է [մարգարեությունը]. «Այդ գիրքը կտրվի



մի մարդու, որ գրագիտություն չգիտի, և նա կասի՝ չեմ կարող ընթերցել, քանի որ գրագիտություն չգիտեմ»: Եվ [այս խոսքով հրեշտակը] նախանշեց Հովհաննեսին՝ Զեբեդեոսի որդուն, քանզի խաչի վրա փառքի Տերը սուրբ Աստվածածնին հանձնեց Հովհաննեսին: Եվ Հովսեփը, ընդունելով Մարիամին, նրան կարգեց իր զավակների շարքում. և նույն տարում երկնքից հայտնվելով՝ հրեշտակապետն ավետեց անճառելի Բանի էջքը երկիր և միշտ ուրախություն բերող ողջույնը մատուցեց նրան: Եվ [հրեշտակապետը] հայտնեց. «Քո ազգական Եղիսաբեթը հղի է իր ծերության մեջ»: Ազգական այն պատճառով է կոչվում, քանի որ քահանաները խնամիություն էին անում Հուդայի ցեղի հետ: Եվ Մարիամը չպատմեց սուրբ հրեշտակապետի տեսիլքը և ուրախաբեր ողջույնը Հովսեփին կամ նրա զավակներին: Բայց երջանիկ Մարիամը խնդրեց երանելի Հովսեփին [իրեն թույլ տալ] մեկնել Հրեաստան՝ Եղիսաբեթի մոտ: Եվ Հովսեփն [իր] որդիներից ու դուստրերից ուղեկիցներ կարգեց, որպեսզի Մարիամի հետ ճանապարհ ընկնեն: Եվ երբ մոտեցան ու հասան Զաքարիա քահանայապետի տուն, այդժամ Եղիսաբեթը, տեսնելով Մարիամին, շտապ վեր կացավ իր գահավորակից և խոնարհվելով Մարիամի առջև՝ գետին ընկավ: Եվ Եղիսաբեթն օրհնեց Մարիամին, կանխատեսեց նրա որովայնի անժամանակ Պտուղը և նրան կոչեց Աստծու Մայր: Իսկ Զաքարիան խոսել չէր կարողանում, [քանի որ համրացել էր]: Եվ նրան (Մարիամին) մեծարանքով ու պատիվներով երեք ամիս պահեցին իրենց տանը: Եվ Զաքարիան նրան կույսերի մեջ պատվավոր տեղում կարգեց՝ բոլոր կույսերից ավելի վեր դասելով:

Եվ [Մարիամը] լցվեց Սուրբ Հոգով ու սկսեց մարգարեանալ իր հետ կատարվելիք երանավետ խորհրդի մասին: Եվ Մարիամն ասաց. «Իմ անձը մեծարում է Տիրոջը», և այսպես շարունակ, ինչպես որ կարգն է: Եվ զարմացան ու հիացան Մարիամի ճանապարհորդակիցները, որոնք նրա հետ ուղևորվել էին Հովսեփի տնից: Երբ նրանք վերադարձան, ամեն ինչ պատմեցին Հովսեփին: Եվ Հովսեփը հիացած ու զարմացած էր, քանի որ տեսնում էր նրա (Մարիամի) դեմքը Սուրբ Հոգով լցված, պանծացած ու զարդափայլ, պատկառելի ու բաղձալի բոլոր տեսնողների համար: Եվ Հովսեփը սքանչանում էր նրա պարկեշտ ու առաքինի վարքով՝ [մտածելով], թե ինչպես է նա երիտասարդության այս տարիքում իր մեջ կրում ընտրյալ իմաստունների կատարելությունը: Եվ երբ լրացավ վեց ամիսը, հայտնապես երևաց աշխարհին կյանք տվող և հրաշափառ հղությունը: Այդ ժամանակ Հովսեփն ասաց Մարիամին. «Իսրայելի Տեր Աստծով երդվեցնում եմ քեզ. պատմիր ինձ այն գործն ու պատահարը, որ քեզ հետ պատահեց»: Եվ Մարիամը Հովսեփին ամբողջությամբ պատմեց հրեշտակապետի ողջ տեսիլքն ու ավետիսը: Եվ Հովսեփը հավատաց ու փառավորեց հրաշագործ Աստծուն: Եվ ինչպես Պետրոսն ընկավ Հիսուսի ծնկների առաջ ու ասաց. «Հեռացիր ինձնից, Տեր, որովհետև ես մեղավոր մարդ եմ», նույնպես և Հովսեփն է ասում. «Օզիան երբ մոտեցավ ու ձեռքը մեկնեց Աստծու ուխտի տապանակին, նույն պահին մեռավ, և Ահարոնի որդիները, քանի որ օտար կրակ մտցրին խորան՝ Տիրոջ առջև, բոցերի մեջ այրվեցին: Եվ արդ, եթե սա (Աստվածածինը) մնա իմ տանը, ես և իմ որդիները՝ բոլորս միասին, կկործանվենք: Եվ եթե [այս ամենը] վատ կերպով պատմեմ հրեաներին, նրանք չեն հավատա, քանի որ նույնիսկ մարգարեներին չհավատացին: Նրանք նույնիսկ չարչարանքներ ու խոշտանգումներ կհարուցեն նրա (Մարիամի) դեմ և Աստծու բարկությունը կբերեն Իսրայելի վրա: Ավելի լավ է՝ ծածուկ արձակեմ նրան, և Սուրբ Հոգին, որ հովանի է նրա վրա, թող պահպանի նրան»: Եվ տեսիլքի մեջ նրան երևաց Տիրոջ հրեշտակը և ասաց. «Մի՛ վախեցիր քո կողակից Մարիամին ընդունելուց»: Ինչպես որ սովորաբար ասվում է՝ «քո տիկինը», «քո աղախինը» կամ «քո աղջիկը», [հրեշտակն] այս խոսքով ուրիշ բան նկատի չունեցավ, այլ միայն այն, որ Մարիամն իբրև կին [խնամակալությամբ] քեզ է պատկանում և քո տանն է: Եվ Փրկիչը խաչի վրա ասում էր. «Ո՛վ կին, ահա՛ քո որդին», և [աշակերտին]՝ «Ահա՛ քո մայրը»: Սակայն ո՛չ նա էր բնությամբ աշակերտի մայրը, և ո՛չ էլ աշակերտն էր բնությամբ նրա որդին, այլ միայն անվանապես և որդեգրության կոչումով: Նույնպես էլ այստեղ [հրեշտակն] ասում է «քո կինը» ոչ թե բնությամբ, այլ լոկ խոսքով և անվանապես: Եվ դարձյալ՝ քանի որ Հովսեփը զարհուրած էր հրաշքներից, այդ պատճառով [հրեշտակն] ասաց «քո կինը»: Ասում է՝ ինչպես որ տղամարդն աներկյուղ է իր կնոջ հետ ապրելու մեջ, այնպես էլ դու աներկյուղ եղիր նրանից: Այնուհետև Հովսեփը դադարեց [տագնապելուց] և հանդարտվեց վախից: Եվ լուր հասավ քահանաներին, թե այն կույսը, որին պահպանության և խնամքի համար հանձնել էին Հովսեփին, հղիացել է: Ուստի քահանաները մարդ ուղարկեցին՝ Հովսեփին հավաքված ողջ բազմության առջև դատաստանի բերելու համար: Եվ Հովսեփն արդարացրեց իրեն՝ ապացուցելով, որ անմեղ է նրան հղիացնելու մեջ: Նա պատմեց այն բոլոր հրաշքների մասին, որոնք Արարչի կողմից կատարվել էին Մարիամի հետ: Կանչեցին երջանիկ Մարիամին և նրա բերանից էլ նույն խոսքերը լսեցին, բայց քահանաները չհավատացին: Այն ժամանակ նրան տարան Աստծու տաճարը և տվեցին խմելու հանդիմանության ջուրը, ինչպես որ Տերը հրամայել էր Մովսեսին: Սակայն ոչ մի մեղք չհայտնաբերվեց, այլ նա անարատ երևաց ողջ ժողովրդի առջև: Եվ ըստ Մովսեսի օրենքի՝ նրան դատապարտելու ոչ մի հիմք չգտան: Եվ ողջ Երուսաղեմն ապշեց և զարմացավ այդ իրական հրաշքից, քանի որ տեսնում էին հղի աղջկա, բայց չգիտեին որևէ տղամարդու, որը պատճառ կլիներ այդ հղության: Աստծու տաճարի սրբություններն էլ նրան (Մարիամին) ընդունում էին որպես սուրբ և անարատ էակի: Եվ Հովհաննեսի ծնվելու օրերին, երբ բացվել էր Զաքարիա քահանայապետի լեզուն, նա վերցրեց Մարիամին ու դասեց կույսերի շարքում: Դրանից հրեաներն էլ ավելի չարացան: Նա (Զաքարիան) նույնիսկ Մարիամի անճառելի ծննդաբերությունից հետո նրան դասում էր կույսերի շարքում և հայտնապես ցույց տալիս, որ նրա անարատ կուսությունը ճշմարտապես ու հավաստիորեն անխախտ ու անձեռնմխելի էր մնացել: Դա ապացուցվում էր այն նշանների միջոցով, որոնցով իմաստասերներն ու փիլիսոփաները ճանաչում են կույսերին՝ չափելով պարանոցի ու գլխի համամասնությունը կամ ներքուստ դարչին ծխելով և բերանի հոտն զգալով:

Շարունակելի

Մելինե ԳՐԻԳՈՐՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Վիլյամ Սարոյանի անգնահատելի ավանդը....

↩ *Էջ 4*

Այս պատմվածաշարում ոչ մի վերացական բան չկա: Ինչպես վաղ շրջանի ժողովածուները, այնպես էլ այս մեկը, հիմնված է հուշերի վրա, եթե նույնիսկ դրանք վերաբերում են ոչ թե հենց գրողի, այլ նրա մերձավորների, օրինակ՝ որդու մանկությանը: Այս պատմվածքների մեջ մանկական զգայունությունը շարադրանքին լարվածություն, հետաքրքրություն ու բացարձակ հմայք է հաղորդում: Գրողի վերոնշյալ ժողովածուն կարելի է բնորոշել որպես գրավիչ ու հուզիչ գիրք, սակայն դրանում առավել աչքի է ընկնում վերջին պատմվածքը, որում բացահայտվում է արվեստագետի մտքի զորության գլխավոր աղբյուրը:


«Ողջ Վոյալդը» երկում (վերնագիրը կապված է «վոյդ» (դատարկություն), «վոյջ» (ուղևորություն) կամ «վորլդ» (աշխարհ) անգլերեն բառերի հետ) խոսվում է մի երեխայի մասին, որի հայրն ու մայրը բաժանվել էին: Այդ դեպքից հետո երեխան հոր հետ դեգերում էր ագարակի բեռնատարով: Սկզբում Սարոյանի հերոսներին համակում է թափառական լինելու զգացումը, այնուհետև նրանց տիրում է արկածային ոգին, իսկ վերջում տոգորվում են հայրական ու որդիական սիրով, ինչն էլ նրանց լիակատար երջանկություն է պարգևում:

Գրողը ցույց է տալիս ընթերցողին, որ երեխան կարող է ունենալ անսպառ հարմարվողականություն, եթե շրջապատում կան ընկերներ և սիրող մարդիկ: Սարոյանն ակնարկում է, որ այդ հատկանիշը կարող է բնորոշ լինել նաև մեծահասակներին: Սակայն սա հնարավոր է, միայն եթե հասուն մարդը կարողանա պահպանել մանկական պարզությունն ու անաղարտությունը: Ճամփեզրին կազմակերպված զբոսախնջույքի ժամանակ երեխան գիտակցում է, որ հացն իրեն ավելի համեղ է թվում, քան նախկինում: Այս պահին ընթերցողը հասկանում է, որ հերոսներին համակած սիրո զգացմունքը հասել է գագաթնակետի: Նմանատիպ պատմություններում Վիլյամ Սարոյանն ապացուցում է մեզ, որ ինքը տակավին ունակ է հաղորդակցվելու համամարդկային՝ հոգու ու սրտի լեզվով: Այդ լեզուն մեծանուն գրողն արդարացիորեն իր սեփականն է համարում:

Տիգրան ՄԱԼՈՒՄՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Իսահակ եպս. Պողոսյան. **«Հայոց ինքնության արեգակը»**

(վիպակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի մասին)



ՀԱՂԹԱՆԱԿ՝ ԱՌԱՆՑ ՍՐԻ
«ԺՈՂՈՎՈՒՐԴՆ առանց գրի չի ապրում»:

Ժողովի երրորդ օրն էր: Վեհարանում հավաքվածների շնչառությունը դանդաղել էր երեկոյի լռության մեջ, իսկ այրվող պատրույգների հոտը՝ միախառնվել զինվորների զրահների սառը մետաղին: Ժողովականները վերջապես որոշելու էին՝ արդյոք հարյուրավոր փորձությունների, պատերազմների ու աղետների բովով անցած հայ ժողովուրդն ունենալո՞ւ է իր սեփական գիրը, թե՞ շարունակելու է ողջ կյանքում ապավինել օտար լեզուներին: Յուրաքանչյուրի հոգում հնչում էր միևնույն հարցադրումը՝ հնարավոր կլինի՞ վերագտնել ու պահպանել սեփական ձայնը, թե՞ այն կորսվելու է առմիշտ:

Արքան նստած էր գահին, մերձակայությամբ՝ կաթողիկոսը: Միմյանց մոտ ու հավասար նստելու այս սովորությունը ժառանգվել էր դեռևս Տրդատ թագավորից ու Լուսավորիչ հայրապետից: Սակայն արքան նստած էր ոչ այնքան որպես իշխող ու թագավոր, որքան մի մարդ, որը գիտակցում է ժամանակի, վեհության ու խաղաղության արժեքը: Նրա աչքերը խոր էին, ինչպես գիշերվա անաստղ երկինքը, բայց և լուսավոր, ինչպես աստղերի փայլը հանգիստ, պարզկա գիշերում:

Առաջինը խոսեց Մեսրոպ վարդապետը՝ բացատրելով հայոց տառերի ստեղծման անհրաժեշտությունը: Նա համեստ էր իր դատողություններում, անգամ հասարակ, բայց առավոտվա արևի առաջին շողերին նմանող՝ դեմքի հստակ լուսավոր արտահայտությունն ու ուսերին զգացվող անօրինակ խաղաղությունը կհուզեին ցանկացած մարդու: Ձայնը մեղմ էր, ժամանակ առ ժամանակ՝ խիստ, հատու ու հպարտ:

— Ազգը միայն այն ժամանակ է կենդանի և ապահով, երբ կարող է իր աղոթքը, իր պատմությունը և իր իմաստությունը գրի առնել ու հիշատակել սեփական լեզվով: Գրերը պարզապես նշաններ չեն. դրանք շունչ են, հոգի ու հավատ: Ինձ համար սա ակնհայտ է, ինչպես որ ամեն մի բացվող օր:

Այս խոսքերից հետո Սահակ հայրապետի դեմքին ժպիտ ուրվագծվեց: Նա մտովի հիշեց իր առաջին հանդիպումն ու զրույցը երիտասարդ Մեսրոպի հետ: Եվ մինչ վարդապետը կավարտեր խոսքը, հայրապետը մի քանի անգամ հետահայաց անդրադարձ ունեցավ:

Հետայնու հանդես եկավ հայրապետը՝ ճերմակ, երկարամորուս, հայացքը՝ ընդգծված հոգևոր խիզախությամբ և աներեր հավատով: Նա գիտեր, որ իրենցից է կախված ոչ միայն Եկեղեցու, այլև ամբողջ մի ժողովրդի հոգևոր ու ազգային ապագան:

— Աստծու խոսքը միայն այնտեղ է կենդանի, որտեղ շատ թե քիչ ընկալելի ու հասկանալի է, որտեղ, ինչպես մեր վարդապետը ուշադրության առավ, շունչ ու հոգի կա և հավատ: Մենք չենք ցանկանում պարզապես մշակույթ կերտել կամ պահպանել, այլ ուզում ենք կառուցել նոր տուն մեր ժողովրդի հոգու համար: Այդ տունը պետք է լինի ամուր, անսասան ու հավերժական, ինչպես որ հավատքի տաճարը: Եթե մենք այսօր երկմտենք ու հապաղենք, ապա վաղն այլևս ի զորու չենք լինելու լրացնելու ահռելի բացը և վաղ թե ուշ արժանանալու ենք սերունդների նախատինքին,— իր միտքը եզրափակեց նա:

Ապա արքան բարձրացավ գահից: Նրա ոսկեծայր հագուստի ծոպերը կարծես սառեցին թիկունքին:

— Աշխարհն ունի իր գիրը, օրենքը, կարգը.... մենք՝ մեր հողը, մեր հոգին, բայց ոչ գիրը, որը շունչ պիտի տա ազգին, ընտրովի մտածողություն և պահպանի նրան: Մենք լիովին ընդունում ենք ամենքիդ մտահոգությունները և ուրախ ենք, որ անտարբեր չեք երկրի կյանքին, բայց պետք է նաև հեռատես ու համարձակ լինել՝ կարդալով ժամանակի նշանները, ինչպես որ մեր նախնիք: Եվ մի բան լավ իմացեք. բոլորս այստեղից պետք է դուրս գանք ավելի միակամ ու համերաշխ՝ իբրև մի մեծ տան հարազատ զավակներ, որոնք ունեն միևնույն նպատակը: Այլապես մեր տունը փուլ կգա՝ դեռևս չկառուցված, ու թշնամին անարգել կսողոսկի ներս, ինչպես որ ուրիշ անգամներ:

— Տեր արքա,— նրա խոսքերից համարձակություն առավ ներկաներից մեկը,— եթե այդպես է, ուրեմն պետք է ավելի անվերապահ ու պարզ խոսենք:

— Խոսեք, որքան ցանկանաք, բայց հարցը լուծում պիտի ստանա և արդարացի գնահատական:

— Մենք արդեն ունենք Սուրբ Գրերի լեզուները: Սրբազան ասորերենը, իմաստության աղբյուր հունարենը: Ինչո՞ւ ենք ուզում մի բան, որը դեռ չի ծնվել ու դեռ հայտնի էլ չէ, թե ուր կարող է մեզ հասցնել:

Արքան մի պահ խոժոռվեց: «Միթե հասկանալի չէ, թե ինչու»,— սառը մտածեց նա:

Ապա սիրտ առավ մեկ ուրիշը.

— Արդյոք բարեբախտությո՞ւն է նոր գիր ունենալը, քանի որ այլ ժողովուրդներ կարող են գնահատել, թե սանձազերծում ենք մեր կամքը:

Արքան հայացքով դարձավ Սահակ հայրապետին, որը հաստատակամ առաջ եկավ ու կանգնեց ամենքի դիմաց:

— Եղբայրնե՛ր և զավակնե՛ր,— զրնգուն հնչեց նրա ձայնը,— երբևէ անդրադարձե՞լ եք՝ ինչպես կարող է ժողովուրդն աղոթել մի լեզվով, որը չի ըմբռնում: Աստված մեր լեզվի մեջ է ամփոփել մեր հոգու մասնիկը: Իսկ մենք ինքնակամ այդ սուրբ առավելությունը տալիս ենք օտարին: Իսկ նոր գիր ունենալը ոչ միայն բարեբախտություն է, այլև աննվաճ ու հավերժական օրհնություն:

— Երաշխավորե՛ք, որ այս փորձը փորձանք չի դառնա մեր գլխին,— վրա բերեց իշխաններից մեկը:

Այս անգամ արքան հայեց Մեսրոպ վարդապետի կողմը, բայց մինչև նա կմոտենար, ասաց.

— Մենք երաշխավորում ենք, որ ամենքդ էլ ըմբռնչխնելու եք հայոց գրերի բերկրանքը և արժանանալու եք գալիքի դրվատանքին: Իսկ եթե ոչ, ապա ամենքիս օրերն էլ հաշված են: Ես սա մեղադրելով կամ բռնանալով չէ, որ ասում եմ, ոչ էլ հանձնապաստան նկրտումներից ելնելով, այլ նախնյաց փորձառությունն ու հենց ձեր հավատարմությունը հաշվի առնելով: Թագավորությունը թագավորից, լեզուն խոսողից, և ազատությունը կյանքից ավելի թանկ են: Դուք այս բաները լավ գիտեք:

— Հիմա ի՞նչ, արքա՛, առաջարկում ես, որ մենք հույս դնենք անհայտ մի բանի՞ վրա,— տեղից ձայնեց տարեց իշխաններից մեկը:

— Ես առաջարկում եմ, որ դուք ձեզ հետ հույս կապեք, քանի որ ձեր գործն ավելի դժվար է լինելու: Եթե Սահակին ու Մեսրոպին հաջողվի վառել Հայոց տան լույսը...— այստեղ արքան մի պահ կանգ առավ,— այդժամ դուք պիտի լինեք դրա երաշխավորներն ու ջահակիրները: Ո՛չ զորապետը և ո՛չ էլ բանակներն առանձին-առանձին չեն կարողանա հաղթանակի ու հաջողության հասնել: Իսկ մենք դատապարտված ենք հաղթանակելու:

Ապա Մեսրոպ վարդապետը, գլուխ խոնարհելով հայրապետին ու արքային, դիմեց ներկաներին.

— Ես անցել եմ Գողթնից մինչև Գանձակ, Տարոնից մինչև Սյունիք: Ամենուր մարդիկ թեև կարդում են օտար լեզուներով, բայց դեռևս զգում, սիրում, հավատում, խոսում ու մտածում են հայերեն: Եթե մենք չգնահատենք այս իրողությունը, ո՛չ պատմությունը, ո՛չ մեր ժողովուրդը, ո՛չ մեկը մեզ չի ների:

Այնուհետև նա փոքրիկ դադար վերցրեց. ներկաները լուռ սպասումով հետևում էին:

— Երբ մայրն իր երեխային օրորոցային է երգում, երգում է իր լեզվով: Մեր լեզուն էլ մեր ժողովրդի օրորոցայինն է, որը չի կարող օտար բառերով հնչել:

Իշխաններից մեկը քրթմնջաց.

— Քաղցր ես խոսում, վարդապե՛տ, համոզիչ, բայց գիր ստեղծելն օրորոցային երգել, հեքիաթ ասել կամ թե խաղ անել չէ:

Մաշտոցը մի պահ դառնությամբ նայեց նրա կողմը:

— Այո՛, իշխա՛ն, դա ոչ մի դեպքում խաղ չէ, այլ պայքար և անգամ պատերազմ:

— Ինչպե՞ս թե: Փաստորեն մեր մտավախություններն անհիմն ու զուր չեն:

— Պատերազմ է մոռացության ու ինքնամերժումի դեմ,— իշխանի խոսքերին նշանակություն չտալով՝ շարունակեց Մեսրոպ վարդապետը,— պատերազմ է, որովհետև եթե չունենանք մեր գիրը, մեր ժողովուրդը կորսվելու է ուրիշների մատյաններում, իսկ մեր անունը, ինչպես ոմանց հագուստի շքեղ վերջավորությունը, միայն եզրագիր է մնալու:

Այդ պահին ժողովականների մեջ մի խլրտում ընկավ:

— Ինձ թվա՞ց, թե՞ դուք էլ նկատեցիք, որ վարդապետը ծայրահեղության է գնում,— վրա բերեց ներկա ասորի եպիսկոպոսներից մեկը քամահրանքով:

Սակայն արքայի ահազդու հայացքը հանդարտեցրեց ներկաներին:

— Եվ պայքար է, որպեսզի մենք միմյանց ավելի դյուրին ու խոր հասկանանք, որպեսզի մի խոսք ասելու համար ստիպված չլինենք մի քանի լեզու խառնել: Որպեսզի ապրածն անցյալում չմնա, այլ դառնա գալիք,— միտքը եզրափակեց Մեսրոպը:

Ամենքի հայացքներն էլ փոխվեցին ու ավելի բարյացակամ դարձան: Վարդապետի դեմքի արտահայտությունը զարմանալիորեն խաղաղ էր ու լուսավոր: Շատերին վաղուց քաջածանոթ էր այդ դիմագիծը՝ բոլոր դեպքերում հանդարտ, անվրդով ու անխռով:

Այդ միջոցին Վռամշապուհ արքան կանգնեց նրանց միջև՝ մեկ ձեռքը դնելով Սահակ հայրապետի, մյուսը՝ Մեսրոպի ուսին:

— Քանի դեռ մեր լեզուն չունի իր ուրույն նշանը, մեր ժողովուրդը չունի իր մնայուն տունը,— ասաց նա՝ հայացքն ուղղելով մասնակիցների աչքերին:— Ժողովուրդը՝ առանց տան, քամու պես է. գալիս է ու անցնում: Իսկ մենք չենք ուզում, որ հայը քամու նման անցնի աշխարհի երեսից:

Արքայի ձայնը թեև բարձր չէր, բայց այնպիսի ծանրություն ուներ, որ թվաց, թե վեհարանի ամեհի գերանները դղրդացին:

— Ահա նրանք, ովքեր ուզում են մեր ժողովրդի համար նոր արև բացել:— Այժմ նրա ձայնը հնչեց բարձր ու գրեթե մարտական:— Մեսրոպ վարդապետը, Սահակ հայրապետի օրհնությամբ, սկսում է հայոց գրերի որոնումը, և մենք կանգնած ենք նրանց թիկունքին: Դուք էլ կանգնեք, եթե իրապես բարին եք խորհում ու կամենում մեր ազգի համար: Կարծում եմ, որ նրանք վաստակել են ամենքիս վստահությունը: Պետք չէ, որ մեր վարանմունքը զրկի նրանց գործելու եռանդից ու կարողությունից:

Ժամանակ առաջ տարակույսներով լցված երեսները հիմա լցվեցին նոր կրակով ու ապավինության զգացումով: Ու չնայած առկա դժգոհություններին ու ձեռնարկված գործի մշուշոտ հեռանկարին՝ մարդիկ հետայնու իրար էին փնտրում բոլորովին այլ կերպ. ասես իսկ և իսկ այդ պահին էին ծնվում հայոց գրերը: Այդ գիշեր ներկաներից շատերը վեհարանից դուրս եկան ոչ թե պարզապես իբրև ժողովականներ, այլև գաղափարով ներմիացած մի վեհ ընդհանրություն, որը վերջապես գտել էր երկար տարիներ կորսված միավորության բանալին:

Ասում են՝ երբ Մաշտոցը գնացել է հեռավոր վայրեր՝ նշաններ որոնելու, արքան հաճախ բաց է արել արքունի պատուհանը, նայել արևելք ու շշնջացել.

— Գնա՛, Մեսրո՛պ, գտի՛ր այն լույսը, որը Հայոց տունը դարձնելու է հավերժական: Բարի Աստված քեզ ճանապարհի առաջնորդող:

Իսկ երբ հայոց տառերը վերջապես ծնվել են, ասում են, Վռամշապուհը բացականչել է.

— Սա մեր կյանքի ու մեր պատմության ամենամեծ հաղթանակն է՝ առանց սրի:

Շարունակելի

Հայկական քաղաքակրթական պետության հոգևոր հիմքերը և Եկեղեցու առաքելությունը

Այսօր, երբ համաշխարհային զարգացումները մարդկությանը կանգնեցրել են արժեքային և աշխարհաքաղաքական խորքային վերափոխումների առջև, առավել քան հրատապ է դառնում ազգային ինքնության վերարժևորումն ու ապագայի հստակ տեսլականի ձևավորումը: Հայկական աշխարհը հաճախ դիտարկում ենք պատմական հիշողության, մշակութային ժառանգության կամ ներկայիս պետական սահմանների շրջանակում: Մինչդեռ այն շատ ավելի ընդգրկուն ամբողջություն է՝ աշխարհով մեկ սփռված, պատմականորեն ձևավորված և ներքին հոգևոր ու մշակութային կապերով միավորված քաղաքակրթական համակարգ:

Այդ համակարգի հարատևության հիմքում լեզուն է, մշակույթը, պատմական հիշողությունը, հայրենի տարածքը և, ամենակարևորը, դրանք միավորող հոգևոր արժեքներն ու հաստատությունները: Այս առումով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին եղել և մնում է հայկական քաղաքակրթության հոգևոր առանցքային հաստատությունը, ազգային ինքնության պահպանման և համազգային կապերի ամրապնդման կարևորագույն երաշխավորներից մեկը:

Հայկական քաղաքակրթական համակարգն ունի երկու փոխկապակցված հենակետային շերտ՝ քաղաքակրթական և իրավաքաղաքական: Քաղաքակրթական միջուկը Արարատյան աշխարհն է՝ որպես հայկական պատմական տարածության, հոգևոր հիշողության և խորհրդանշական ինքնության առանցք, իսկ իրավաքաղաքական միջուկը՝ Հայաստանի Հանրապետությունը՝ որպես հայոց պետականության ժամանակակից կազմակերպված ձև:

Այս երկու շերտերը չեն հակադրվում և չեն կարող փոխարինել միմյանց: Հայաստանի Հանրապետությունը հայոց պետականության իրավական հիմքն է, իսկ Արարատյան աշխարհը՝ հայկական քաղաքակրթական ինքնության պատմական ու խորհրդանշական առանցքը: Քաղաքակրթական պետության գաղափարը կոչված է այդ հենակետերի կապը դարձնելու գիտակցված և ապագային միտված:

Պետականության կորստի և քաղաքական մասնատվածության ժամանակաշրջաններում հայության գոյությունը շարունակվել է նաև պետական կառավարման կենտրոններից դուրս: Հենց այդ պայմաններում է առանձնահատուկ դեր ստանձնել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին: Իր թեմական և հոգևոր կառույցների, վանական կենտրոնների, կրթական ավանդույթների ու համայնքային կապերի միջոցով Եկեղեցին ապահովել է հայկական հոգևոր և մշակութային կյանքի շարունակականությունը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը պատմականորեն եղել է այդ համակարգի կենտրոնը՝ իր շուրջ համախմբելով թեմեր և աշխարհի տարբեր հատվածներում ձևավորված հայկական համայնքներ:

Այս պատմական փորձը կարևոր հիմք է քաղաքակրթական պետության գաղափարի համար: Հայկական քաղաքակրթությունը պետք է դիտարկել ոչ միայն իբրև պետական սահմանների ներսում գործող համակարգ, այլև որպես տարածքային միջուկը, հոգևոր արժեքները, հաստատություններն ու աշխարհասփյուռ հաղորդակցական կապերը միավորող ամբողջություն: Այդ տեսլականում Եկեղեցին հոգևոր առաջնորդության և համազգային համախմբման առանցքային հաստատությունն է, իսկ պետությունը՝ քաղաքակրթական ամբողջության քաղաքական-իրավական կազմակերպման պատասխանատուն:

Քրիստոնեության ընդունումը և Հայ Եկեղեցու ձևավորումը հայկական քաղաքակրթությանը հաղորդեցին հոգևոր ինքնատիպություն և պատմական դիմակայունության կարևոր հիմքեր: Դրանք հատկապես նշանակալի դարձան այն ժամանակաշրջաններում, երբ հայությունը զրկված էր սեփական պետականությունից կամ ապրում էր քաղաքական մասնատվածության պայմաններում:

Եկեղեցու միջոցով պահպանված հոգևոր և մշակութային կապերը հնարավորություն տվեցին, որ հայկական ինքնությունը պահպանվի ոչ միայն հայրենի տարածքում, այլև աշխարհով մեկ սփռված համայնքներում:

Սակայն հոգևոր ժառանգությունը հարատևում է միայն այն ժամանակ, երբ յուրաքանչյուր սերունդ գիտակցում է դրա արժեքը, պատասխանատվություն ստանձնում դրա պահպանման ու զարգացման համար և փոխանցում այն հաջորդներին: Այսօր հայկական քաղաքակրթության կենսունակությունը կախված է ոչ միայն անցյալի ժառանգությունից, այլև այն մերօրյա արժեքների և ապագայի կազմակերպման սկզբունքների վերածելու կարողությունից:

Հետևաբար Հայ Եկեղեցու ժամանակակից առաքելությունը պետք է դիտարկել ոչ միայն պատմական վաստակի գնահատման, այլև ապագայի պատասխանատվության տեսանկյունից: Այն պետք է շարունակի լինել հայության հոգևոր առաջնորդության, ազգային հիշողության պահպանման, կրթական ու մշակութային կյանքի խթանման և համահայկական կապերի ամրապնդման առանցքային հաստատությունը:

Հայկական քաղաքակրթական պետությունը չի կարող ձևավորվել միայն քաղաքական որոշումներով կամ վարչական բարեփոխումներով: Այն պահանջում է հոգևոր հիմք, արժեքային միասնականություն, պատմական ինքնագիտակցություն և ազգային ներուժը համախմբելու կարողություն: Իսկ այդ ամենի հիմքում պետք է լինի այն գիտակցումը, որ հայությունը պարզապես անցյալ ունեցող ժողովուրդ չէ, այլ սեփական քաղաքակրթական ընթացքը շարունակելու և ապագան կերտելու պատասխանատվություն կրող համբողջություն:

Արմեն ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խրիմյան Հայրիկ և Րաֆֆի՝ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաները

Սկիզբը՝ թիվ 13

1860 թ. նոյեմբերի 10-ին Խրիմյանն ուղևորվեց դեպի Կովկաս, դիմեց ուղղակի Ս. Էջմիածնին, Մատթեոս կաթողիկոսից (Մատթեոս Ա. Կոստանդնուպոլսեցի Չուհաճյան, գահակալել է 1858–1865 թթ.) կոնդակ ստացավ, որով նրան արտոնվում էր Ժառանգավորաց դպրոցի անունից օժանդակություն խնդրելու կովկասցի հայերից: Թիֆլիսում Խրիմյանն ընդունվեց մեծ սիրով և ընդհանուր համակրությամբ, իսկ նրա քարոզները տպավորիչ ազդեցություն ունեցան ժողովրդի վրա:

Ըստ Րաֆֆու՝ թեև Խրիմյանն իր կյանքում շատ անգամ մեծ գումար է ձեռք բերել, բայց նա միշտ մնացել է աղքատ, պարտքերի տակ խրված: Խրիմյանը խիստ «անփույթ» էր իր անձնական վայելչությունների և բարեկեցության հարցում. նա իր համար ծախսը համարում էր վատնում. «Նա որպէս անհաշիւ կերպով ստանում էր, նոյնպէս անհաշիւ կերպով սպառում էր: Հանդիպած աղքատին Խրիմեանը պատրաստ էր իւր վերջին փարան տալու և ինքը սոված մնալու: Սեպհականութիւնը նորա համար ոչինչ նշանակութիւն չունէր, երբ նա ծառայում էր ընդհանուրի օգտին»:

Չնայած նյութական մշտական դժվարություններին՝ Խրիմյանը երբեք չվհատվեց, չհուսահատվեց, անդուլ գործեց ու արարեց:

Խրիմյանը նոր ուժ ու եռանդ է ստանում, երբ Կ. Պոլսի ազգային վարչության և պատրիարքի օգնությամբ ընտրվում է Տարոնի թեմակալ առաջնորդ և Մշո Ս. Կարապետ վանքի վանահայր: Ամբողջ Արևմտյան Հայաստանում ու Փոքր Ասիայում սա միակ վանքն էր, որ Երուսաղեմից հետո ուներ նշանակալի եկամուտ: Հայաշատ բոլոր վայրերից ուխտավորների բազմամարդ խմբեր էր նա ձգում դեպի իրեն: Խրիմյանին այդպիսի արդյունաշատ ու եկամտաբեր վանք էր անհրաժեշտ, որպեսզի իրականացներ իր ազգանպաստ ձեռնարկումները: Նա անմիջապես Վարագա վանքի հին մամուլը փոխադրեց Մշո Ս. Կարապետի վանք և իր առաջադեմ աշակերտներից երկուսին հետն առնելով՝ բերեց Տարոն:

1863 թ. Մշո Ս. Կարապետի վանքում Խրիմյանն իր աշակերտ Գարեգին Սրվանձտյանցի խմբագրութեամբ հրատարակել է տալիս մի շաբաթաթերթ՝ «Արծուիկ Տարօնոյ» անունով: Նա բարեկարգում է վանքի ուսումնարանը, կանոնավորում վանքի եկամուտները:

Սակայն այստեղ ևս «ագռաւների սև երամը չէ դադարում որոգայթներ լարել արիաջան «Հայրիկի» դէմ: Քանի անգամ իւր սեղեակի լուսամուտներով արձակուած հրացանների գնդակներից հազիւ է ազատվում նա: Կաշառուած քրդերը այստեղ ևս մի քանի վարդապետների չարանենգութեան գործիք դարձան. խռովութիւնն օր ըստ օրէ վտանգաւոր կերպարանք ստացաւ: Պատճառը խիստ պարզ էր. Խրիմեանի վանահայր լինելը վերջ տուեց մի քանի վարդապետների շահասիրութեանը, որոնք իրանց ձեռքն էին անցուցել վանքի բոլոր արդիւնքների մենավաճառութիւնը: Իրանց նախկին ցանկութեանը հասնելու ուրիշ հնար չէին գտնում այդ անպիտանները՝ բացի Խրիմեանի մահը»:



Ըստ Րաֆֆու՝ Հայոց Հայրիկն իր կյանքն ազատեց՝ փախչելով Կարին և այնտեղից էլ՝ Կ. Պոլիս: Նրա ոսոխներից չորս վարդապետներ դատապարտվեցին արտաքսման ու աքսորի, որոնց պատժից ազատեցին հենց իր՝ Խրիմյանի խնդրանքով: Շուտով Հայրիկը Կ. Պոլսում տպագրեց «Մարգարիտ Արքայութեան Երկնից» գրքույկը, որն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Տէր, ո՛վ կարող է առանց Քո ձեռնտու օժանդակութեան՝ Քո պատուիրած արդարութիւններ անթերի կատարել: Տէր, Դու ինքնին եկար տեսար իսկ մարդկային ապիկարութեան վիճակ ու խօսեցար, «Առանց Իմ ոչ ինչ կարէք առնել»: Ուրեմն Դաւթին պէս ժտելով՝ Քո լոյս եւ օգնութիւն կը խնդրեմք: Իմաստո՛ւն արա զիս, Տէր. եւ առաջնո՛րդ եղիր ինձ Քո պատուիրանաց անխոտոր շաւիղներու մէջ, որոց միայն հաճեցաւ միտքս ու հոգիս: Տէր, Քո սիրովդ աչքերս դարձուր դէպի երկինք, որպէս զի չի տեսնամ աշխարհիս հրապուրիչ նաւրութիւններ, որ կը հանեն զիս Քո սուրբ ճանապարհէն: Ահա ցանկացայ, սիրեցի, որ գրեցի Աւետարանիդ պատուիրանաց խօսքեր: Ես որ տրուպ պաշտօնեայ եմ Աւետարանիդ քարոզութեան, այս գուղնաքեայ վաստակ իբրեւ ի քէն նուէր եւ շնորհ՝ եկեղեցւոյդ որդւոց կ'ընծայեմ»:

Բավականին մռայլ գնահատական է տալիս Րաֆֆին Խրիմյանի հետագա բարձրացմանը: Նա գրում է. «1868 թի 20 հոկտեմբերի Խրիմյանը արեց իւր առաջին սխալը՝ Էջմիածնում ձեռնադրուելով եպիսկոպոս: Իսկ 1869 թի 4 սեպտեմբերի նա արեց իւր երկրորդ սխալը՝ Կ. Պոլսում ընտրուելով պատրիարգ: Նա կարծում էր, թէ եկեղեցական բարձր աստիճանների վերա կանգնելով՝ աւելի օգուտ կարող էր բերել ազգին: Խրիմյանը չէր ծնուած բարձր կոչման համար, որ պատրիարքական աթոռի վերա փտեցնէր իւր կեանքը, և ձեռքը, որ սովոր էր մուսաների շնորհած քնարը հնչեցնելու, պարապեցնէր քաղաքական և կրօնական ժողովների վճիռները ստորագրելով»:

Մեջբերումից ակնհայտ է դառնում, որ Րաֆֆին Խրիմյանին համարում էր բացառիկ անհատականություն, որի ուժը ժողովրդի հետ անմիջական կապի, ազատ խոսքի ու շփումների, բոցաշունչ քարոզների ու հրապարակային ելույթների, լուսավորական ու հեղափոխական գաղափարներ սերմանելու մեջ էր (ինչպես նա անում էր Վարագա վանքում, Տարոնում և այլուր):

Երբ Խրիմյանը ձեռնադրվում է եպիսկոպոս, ապա ստանձնում Կ. Պոլսի Հայոց պատրիարքի աթոռը, նա կամա թե ակամա դառնում է կառավարական-պաշտոնեական համակարգի մի մասնիկ: Րաֆֆու համոզմամբ՝ վարչական-պաշտոնեական կապանքները միայն կաշկանդելու, ճնշելու էին ազատախոհ Վասպուրականի արծվին: Այդ կապանքները սպանելու էին Հայոց Հայրիկի ազատ միտքը, ազատ խոսքն ու բանաստեղծական բոցաշունչ հոգին: ➥ *էջ 8*

Խրիմյան Հայրիկ և Րաֆֆի՝ ազգային-ազատագրական պայքարի ռահվիրաները

↩ էջ 7

Րաֆֆին շեշտում է, որ Խրիմյանը հոգով բանաստեղծ էր, հռետոր, ազատ ստեղծագործող, որի «ձեռքը սովոր էր քնար հնչեցնելու»՝ ոգեշնչելու, մտավոր ու հոգևոր զարթոնք առաջացնելու և պայքարի կոչելու: Պատրիարք դառնալով՝ Խրիմյանն ստիպված էր իր թանկարժեք ժամանակն ու եռանդը վատնելու կրոնական ու քաղաքական ժողովների անվերջանալի, հաճախ՝ անպտուղ վեճերի, ներքին խարդավանքների և թղթաբանության վրա («վճիռները ստորագրելով»): Րաֆֆու ընկալմամբ սա մեծագույն շռայլություն էր և տաղանդի վատնում-փոշիացում մի ազգի համար, որը տիրող դրությունը փոխող առաջնորդների կարիք ուներ, ոչ թե կամակատար պաշտոնյաների:

Ըստ Րաֆֆու՝ Խրիմյանը միամտորեն կարծում էր, թե բարձր աստիճանի հասնելով՝ ավելի մեծ լծակներ կունենա ազգին օգնելու համար: Սակայն, ինչպես ցույց տվեց պատմությունը (և ինչը նկատել էր Րաֆֆին), Կ. Պոլսի պատրիարքարանը գործում էր օսմանյան կառավարության ճնշման և տեղի հարուստ ամիրայական դասի ու պահպանողական գործիչների ազդեցության ներքո: Բարձրանալով պատրիարքի աթոռին՝ Խրիմյանն իրականում զրկվեց ազատորեն գործելու հնարավորությունից: Նրա գաղափարապաշտությունը բախվեց դաժան իրականության՝ օսմանյան կառավարության բռնապետական վարչակարգին ու քաղաքական ցինիզմին, ինչն էլ ի վերջո հանգեցրեց ազգային գործչի հրաժարականին (1873 թ.): Տեղին են Րաֆֆու մտահոգությունը և հոգեկան ալեբախումները. պատրիարքական աթոռը ոչ թե բարձրացնում էր Խրիմյանին, այլ մեռցնում էր նրա հանճարը, ազատատենչ ոգին:

Րաֆֆու այս գնահատականը ոչ թե Խրիմյանի անձի քննադատություն է, այլ մեծագույն ափսոսանքի արտահայտություն: Սա պատմական դաս է այն մասին, թե ինչպես երբեմն նույնիսկ ամենաբարի մղումներով արված քայլը (բարձր պաշտոն ստանձնելը) կարող է կաշկանդել ժողովրդական հերոսին, համազգային պայքարի գաղափարախոսին ու դրոշակակիր առաջնորդին: Րաֆֆին փաստում է՝ Խրիմյանի պաշտելի անձն ու անունը՝ Հայոց Հայրիկ, ժողովրդի սրտում էր ու լեզվին, իսկ որպես պատրիարք նա ընդամենը պաշտոնյա էր և օսմանյան կառավարության ձեռքին պատանդ:

Ցավոք, մեծանուն գրողը չտեսավ Խրիմյանին Ամենայն Հայոց կաթողիկոսական շքեղ գահին բազմած, չապրեց Խրիմյանի կաթողիկոսության տարիներին:

Րաֆֆու համար Խրիմյանի կյանքի ամենահերոսական ու արժեքավոր շրջանը ոչ թե պատրիարքական տարիներն են, այլ այն օրերը, երբ նա մի պարզ ու հասարակ վարդապետ էր: Վարագա վանքը և Ժառանգավորաց դպրոցը Րաֆֆին համարում էր Խրիմյանի ստեղծած հրաշքները, որտեղ նա գյուղացի որբ ու աղքատ երեխաներից պատրաստում էր ապագա ուսուցիչների, մտավորականների ու ազգանվեր պաշտպանների: Խրիմյանն առաջիններից էր, որ, եկեղեցում հնչեցնելով Հայկի և Արամի անունները, եկեղեցական բեմը դարձրեց նաև ազգային ինքնագիտակցության բարձրացման և ճշմարիտ հայրենասիրական դաստիարակության ամբիոն: Նա Աստծու տաճարում խոսում էր հայոց փառապանծ նախնիների՝ Հայկի ու Արամի մասին՝ քրիստոնեական հավատքը միահյուսելով ազգային ազատագրական գաղափարախոսությանն ու հայրենասիրության քարոզչությանը:

Ըստ Րաֆֆու՝ Խրիմյանի պատրիարքության չորս տարիներն անցել են խիստ անգույն. նա մի երևելի բան չի ստեղծել: Որովհետև կառավարչական մարդ չէր. նա խոսքով՝ նա չէր սովորել դիվանագիտական խորամանկ ձևերը, որով հմուտ քաղաքագետը պտտեցնում է իր նենգավոր մեքենան: Արդարև, Խրիմյանը եռանդոտ, անհանգիստ և անվաստակելի բնավորություն ուներ: Նա սիրում էր գործել, ընկնել, կանգնել և միշտ պատերազմել վտանգների մրրկածուփ խռովության դեմ: Բայց այդ բոլորը բավական չէր մի սահմանադրական վարչության գլուխ լինելու համար: Խրիմյանը, ինչպես շատ բանաստեղծներ, գաղափարապաշտ է: Նա համբերություն չուներ ազգային գործերը կանոնավոր և հաջորդաբար բարեկարգելու համար: Նա պահանջում էր հրաշքներ: Նա ցանկանում էր հայ ժողովրդին հանկարծակիորեն վերստեղծել, վերափոխել և դարձնել ավելի առաջադեմ ու զարգացած:

Խրիմյանի խռովությունները Կ. Պոլսի Քաղաքական ժողովի հետ մի այդպիսի անհամբերության ծնունդ էին: Նա պահանջում էր վերաքննել արևմտահայերի ազգային սահմանադրությունը, մաքրել այն թերություններից և վերին աստիճանի կատարելագործության հասցնել: Դա շատ գեղեցիկ գաղափար էր, եթե հնարավոր լիներ: Բայց Խրիմյանը նեղսրտեց ու տարակուսեց, թե ինչու չեն հասկանում իրեն, և հրաժարվեց պատրիարքությունից:

Այսպիսով՝ եթե հուշագրությունից մեջբերված առաջին հատվածում Րաֆֆին մեծ ափսոսանքով ողբում էր օսմանյան կառավարական համակարգի մեջ Խրիմյանի ստեղծագործական ու հրապարակախոսական տաղանդի փտումը կամ մահը, ապա հաջորդ հատվածում նա ցույց է տալիս, թե ո՛վ է իսկական Խրիմյանը՝ ժողովրդական հերոս առաջնորդ, որ իր հոգու հայրենասիրական բոցով արթնացրեց թմրած հայությանը: Րաֆֆու համար Խրիմյանն իր ամբողջ էությամբ պատկանում էր հայ ժողովրդին, իրեն ծնած մայր հողին ու հայրենի Վասպուրականի լեռներին, Տարոնի ծաղկավետ դաշտերին ու կրթական գործին՝ ազատական լուսավորական միջավայրին, որտեղ ձևավորվում էր նոր, լայնախոհ, շրջահայաց, ազատաբաղձ ու պայքարող հայ մարդը:

Խրիմյանի մասին իր ուշագրավ հուշագրությունը հայ ժողովրդի ազատագրական պայքարի մունետիկ ու ճշմարիտ հայրենասիրության դաստիարակ, մեծանուն պատմավիպասան Րաֆֆին ավարտում է հետևյալ տողերով. «Գնա՛, ազգի՛ բարեկամ, ճակատագիրը կոչում է քեզ. պատրիարքութեան սահմանափակ-պաշտօնական շրջանը քո տեղը չէ: Դո՛ւ, որպէս Իսրայէլը Բաբելօնում, միշտ կարօտում էիր քո նազելի Սալիմին (Երուսաղեմին.— *Ա. Մ.*) — դա Վասպուրականն է: Գնա՛, կրկին սիրէ Վարագը, սիրէ՛ Այգեստանի ուռիները... Արծիւը և ժառանգաւորաց դպրոցը քեզ սպասում են....»:

Արման ՄԱԼՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

Հիշել առանց շղթայվելու, հուսալ առանց խաբվելու

Պատմական ցնցումները՝ Հայոց ցեղասպանությունից մինչև արցախահայության բռնի տեղահանում, ինչպես նաև դրանց ուղեկցող արտագաղթն ու հասարակական խորացող անվստահությունը, ծանր հետք են թողել հայ հանրային գիտակցության վրա: Ճգնաժամային այս պայմաններում հաճախ է հնչում սեփական ճակատագրի տերը լինելու հրամայականը, որը համահունչ է ստոիկյան փիլիսոփայությանը, մասնավորապես՝ Մարկոս Ավրելիոսի այն ձևակերպմանը, թե մարդու կյանքի որակը պայմանավորված է նրա մտքի որակով: Սակայն ներաշխարհի ներդաշնակեցման այս սկզբունքը բախվում է օբյեկտիվ իրականությանը. ինչպե՞ս պահպանել մտքի պարզությունը, երբ արտաքին միջավայրը շարունակաբար վերարտադրում է անարդարություն ու կորուստ: Ավելին՝ ինչպե՞ս հաղթահարել պատմական ցավը՝ առանց ուրանալու հավաքական հիշողությունը և ներելու նրանց, ովքեր զղջում չեն դրսևորում: Այս երկընտրանքը դուրս է զուտ քաղաքական հարթությունից և վերածվում է ինքնության ու հոգևոր կենսունակության հիմնահարցի. ինչպե՞ս հիշել՝ առանց անցյալի գերին դառնալու, և ինչպե՞ս կողմնորոշվել ժամանակի մեջ:

Ժամանակի ընկալման այս խնդրին դեռևս վաղ քրիստոնեական շրջանում անդրադարձել է Օգոստինոս Երանելին: «Խոստովանություններ» աշխատության մեջ նա ժամանակը դիտարկում է որպես հոգու ներքին չափում, որտեղ անցյալը գոյություն ունի որպես հիշողություն, ներկան՝ որպես հայեցողություն (ուշադրություն), իսկ ապագան՝ որպես սպասում: Այս հայեցակարգից բխում է հասարակագիտական և հոգեբանական կարևոր օրինաչափություն. այն ժողովուրդը, որն ապրում է բացառապես հիշողությամբ, կորցնում է զարգացման հեռանկարը, իսկ միայն սպասումով ապրողը կտրվում է սեփական արմատներից: Ազգային և հոգևոր առողջ կենսագործունեությունը պահանջում է ժամանակային այս երեք հարթությունների հավասարակշռումը ներկայի գիտակցված գործողության մեջ: Հենց այս հավասարակշռությունն է ձևավորում այն, ինչն արդի հանրային խոսույթում հաճախ բնորոշվում է որպես «իրական» ուղի:

«Իրականի» և պատրանքայինի սահմանագիծը հստակեցնելու տեսանկյունից ուշագրավ է 20-րդ դարի գերմանացի աստվածաբան Դիտրիխ Բոնհեֆերի ժառանգությունը: 1930-ական թվականներին՝ նացիզմի վերելքի պայմաններում, երբ իշխող քարոզչությունը պատերազմն արդարացնում էր որպես կորցրածի արդար վերադարձ, Բոնհեֆերը հակադրվում էր ռազմականացման փառաբանմանը: Նա պնդում էր, որ իրական խաղաղությունը չի կարող հիմնվել սոսկ անվտանգային երաշխիքների վրա, քանի որ անվտանգության բացարձակ պահանջը սնվում է անվստահությունից, իսկ անվստահությունն անխուսափելիորեն նոր պատերազմ է ծնում:

Սակայն Բոնհեֆերի միտքը չի սահմանափակվում խաղաղության տեսական կոչերով. զարգացնելով օգոստինյան «շնորհի» վարդապետությունը՝ իր «Հետևում» («Nachfolge») աշխատության մեջ նա ներմուծում է «էժան» և «թանկ» շնորհների հակադրությունը: «Էժան շնորհը» ներումն է առանց ապաշխարության, հարմարվողականությունը՝ առանց սկզբունքի, և հավատքը՝ առանց գործուն հետևողականության: Դրան հակադրվում է «թանկ շնորհը», որը պահանջում է ամբողջական նվիրում և անձնազոհություն հանուն բարձրագույն արժեքի, ինչը գերմանացի աստվածաբանն ապացուցեց սեփական կյանքի գնով՝ ընդդիմանալով նացիստական վարչակարգին:

Աստվածաբանական այս դրույթը խիստ կիրառելի է հայաստանյան արդի իրականության գնահատման համար: Մեր հասարակական և եկեղեցական խոսույթը հաճախ է հայտնվում «էժան շնորհի» տիրույթում՝ սահմանափակվելով վերացական ու գեղեցիկ հռետորաբանությամբ, մինչդեռ սոցիալական սուր խնդիրները մնում են չլուծված: Բարձրագոչ գաղափարները կորցնում են իրենց կշիռը, երբ բռնի տեղահանված առ այսօր զրկված է կայուն կացարանից, երիտասարդը երկրում մնալու հեռանկար չի տեսնում, իսկ ընտանիքների սոցիալական բեռը հանգեցնում է ժողովրդագրական անկման ու արտագնա աշխատանքի: Առանց մերձավորի նկատմամբ գործնական պատասխանատվության, որի վրա խարսխվում է համայնքը, ցանկացած հոգևոր կամ հայրենասիրական քարոզ վերածվում է ձևականության:

Հանրային բևեռացման և արժեքային ապակողմնորոշման պայմաններում առանձնահատուկ հնչեղություն է ստանում Բոնհեֆերի մեկ այլ դիտարկում «Համատեղ կյանք» երկից. «Ով համայնքի մասին իր երազանքն ավելի շատ է սիրում, քան բուն համայնքը, դառնում է այդ համայնքի կործանիչը»: Սա լուրջ ազդակ է մի հասարակության համար, որտեղ գաղափարական կաղապարները՝ լինեն դրանք ռազմահայրենասիրական պատրանքներ, թե «իրականության» անունից քարոզվող օտարում, հաճախ վեր են դասվում կոնկրետ մարդուց: Տեղահանվածները, աղքատները, քաղաքականացվածներն ու արհեստական բաժանարար գծերով պիտակավորվածները, գաղափարական բարիկադներով օտարվածներն ու միայնակները նույնքան «իրական Հայաստանի» մի մասն են, որքան դու, թեև հավաքական նպատակի մեջ չկան «դու»-ն ու «ես»-ը, «սևն» ու «սպիտակը», այլ կա բուն նպատակը՝ «մենք»-ը՝ ՀԱՅԸ: Իրականում չկա նաև վերացական «իրականը». կա այն, ինչը պետք է ընդունել, այլ ոչ թե հորինել: Կա ցավ ու տանջանք տեսած մի հավաքական դեմք, որին կարելի է սիրահարվել և հանուն որի գեղեցկացման կարելի է նույնիսկ զոհվել: Հետևաբար՝ ցանկացած քաղաքական կամ հոգևոր տեսլական կենսունակ է միայն այն դեպքում, երբ ծառայում է այդ հավաքական դեմքի առողջացմանն ու ներքին համերաշխությանը:

Ազգային և հոգևոր վերածնունդը պահանջում է դուրս գալ ինչպես զոհի հոգեբանական կաղապարից, այնպես էլ «էժան շնորհի» հարմարվողականությունից: Օգոստինյան ժամանակի և բոնհեֆերյան պատասխանատվության համադրումը հուշում է ճգնաժամի հաղթահարման բանաձևը. անցյալի հիշողությունը պետք է վերածվի ոչ թե կապկպող շղթայի, այլ կենսափորձի ու իմաստության, իսկ ապագայի հույսը՝ ոչ թե դատարկ պատրանքի, այլ ներկայում գործելու պատասխանատու խթանի: Այդ առողջացումը սկսվում է այն պահից, երբ հասարակական հարաբերությունների հիմքում դրվում է ոչ թե պարզ բարեգործությունը, այլ հոգ տանելու և կողքին կանգնելու անվերապահ հրամայականը, երբ մեր մեջ ուժ ենք գտնում՝ հաղթահարելու ներքին օտարումն ու անելու քրիստոնեականը՝ նկատելու միմյանց: Որովհետև հենց այդ «միմյանց»-ի՝ քրիստոնեական «զմիմեանս»-ի մեջ է «թանկ շնորհն» իր թանկ արժեքը ստանում, որն Աստծու արյունն է:

Գասի ԳԱՍՊԱՐՅԱՆ
Աստվածաբան

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Նշան Աբասյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am

web կայք՝ www.armenianchurch.org

Ստոր. տպագր. 9.11.2026 թ.